

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ

## ԵՐԿՈՒ ԴԱՐ

Ժէ դարուն վերջը հայկական անկախութեան մը ծրագրին և ձեռնարկներուն մասին «Նոր կեանք» ի նախորդ թրջումով հրատարակուած սեղեւութիւնները յայտնութիւն մը եղան անոնց համար սրոնք մօտէն ուսումնասիրած չեն մեր պատմութիւնը: Մեր մէջ թիշ, շատ թիշ ծանօթ անուն մըն է Խորայէ Օրիին. զխաւորաբար Բաֆֆի մէկ զրքին՝ «Խամսայի Մելիքութիւն» ներուն մէջ յիշատակուած, ուրիշ անուններու հետ խառնամառն, կը մոռցուի, առանց մտքի եւ սրտի վրայ տեսական յիշատակ մը թողու:

Մեր պատմութեան վիպական դէմքերէն մէկն է սակայն առ Օրիին. մարմնացում՝ հայ ժողովրդին բազմաբարեան ըզձանցներուն և երազներուն, սրոնք ազդի մը իսկականը ստեղծելով կը պահպանեն անոր գոյութիւնը: Պատկեր նաեւ, ինքն ու իր ժամանակակիցները, Հայոց սրտի զիւրաբար խանդավառութեան և մտքի անգործնականութեան, որ ըզձանցներու և երազներու հետ մէկտեղ մեզի ալ ժառանգութիւն ինչպէս մեր հայրերէն:

Ետ չգանանք 17րդ դարէն անդին. հոն կանգ առնենք: Մեր հայրերը երեք դար առաջ ալ կը խորհէին անկախ Հայաստան մը ստեղծել. առ խորհուրդը կը շարունակեն յետոյ, ի դիմաց ազդին, Արղւթեանց Յովսէփ, Ներսէս Աշարակեցի, Խրիմեան Հայրիկ, Ներսէս Վարժապետեան, Իզմիրեան Մատթէոս եկեղեցականները, իւրաքանչիւրը մէյմէկ Խորայէ Օրի հանդիսանալով: Ամէնուն ծրագիրը միեւնոյնը չէ: Ժամանակին հանգամանքներուն, եւ մեր զօրութեանը ու ակաբութեանը աստիճանին համեմատ, ծրագիրները կ'ընդլայնին կամ կը սեղմուին. ինչ որ Ներսէս պատրիարք կ'ընար խնդրել Պերլինի Վեհաժողովէն, Իզմիրեան պատրիարք անոր մօտէցող առաջարկ մը գետպաններու գրասեղանին վրայ գնել մտքէն իսկ չէր անցընէր: Բայց, ծրագիրը տարբեր, ձգտումը միեւնոյն:

Սակայն ո՛չ մեծ ծրագիրը իրականացաւ, ո՛չ ալ պըզտիկը: Հիմա որ 20րդ դարը մանկու վրայ ենք, երեք դարու յարատեւ աշխատութեան ու յարատեւ անյաջողութեան պատճառները քննել, իմաստասիրել եւ անոնցմէ խրատուիլ թերեւս էն դարձնական միջոցը ըլլայ մեր զաւակներուն իւր Հայ և ուրիշու ապագայի մը պատրաստութեան:

«Նոր կեանք» ի ուղղութիւնը այդ նպատակին նուիրուած է: Զախորդութեան պատճառները բազմազան են, ու կամաց կամաց կը քննուին:

Հայ ժողովուրդը Խորայէ Օրիի աստեւ հիմակուանին հետ անբաղկատելի կերպով աւելի նպատաւոր պայմաններու մէջ կը գտնուէր իր ազատութիւնը պատրաստելու համար: Կէս-անկախ, ինքնապուտ մէլիքներու հրամանին տակ, պատերազմիկ, քաջ հայ ժողովուրդ մը հոծ թուով կ'ապրէր Հայաստանի հողին վրայ: Իր շուրջը կամ գլուխը գտնուող պարսկական պետութիւնը տկարացած էր թէ՛ նիւթապէս եւ թէ՛ բարոյապէս: Հայ եկեղեցականութիւնը եւ հայ մէլիքութիւնը սր Հայաստանի անկախութեան տենչացողներ էին, կրնային քայլ առ քայլ գլխի այդ նպատակը ընթանալ՝ ազգային ծրագրի մը վրայ իրենց ուժերը միացնելով: Բայց փրկութիւնը կրէն սպասեցին, աչքերնին հեռուները գտնուող իշխաններու վրայ յառեցին: Անոնք չեկան, և չէին կրնար ալ գալ:

Արտաքին յոյսէն զատ իրեն ուրիշ ապաւեն պատրաստելու պէտքը չըզաց հայ ժողովուրդը: Ներքին միաբան ուժ մը թէեւ չէր կրնար անմիջապէս ազատ Հայաստանի մը ստեղծել բայց փոքր այլ ամբակառայց ամբողջ մը կը գտնուար ուրիշ կարելի էր այդպէս պատրաստել:

Այդ թուականներուն Ռուսը տակաւին մեր երկիրնեքն բաւական հեռու կը գտնուէր, բայց ազատութիւնը խաչապաշտ թաղաւորէն սպասող հայ ժողովուրդը արդէն ձարերուն անկախուց կը մնար: Ու երբ Ռուսը ա՛լ շատ մօտեցաւ մեզի, ներքին ազգային ամբողջ մը շինելու հարկը անկէ ետքը բնաւ զգալի չեղաւ: Ռուսն էր մեր պատրաստութեան բերդը: Ռուսին վրայ դրաւ իր յոյսը Արղւթեանց Յովսէփի կաթողիկոս, Ռուսին ապագինեցաւ Ներսէս Աշարակեցին, Ռուսին գերիւր ինչպէս Սան-Սթէֆանօ Ներսէս վարժապետեան: Ասիոյ կողմէն իր յառաջխաղացութեան դէմը կանգնած իռլանդական պատմէշը քանդելու որմնախարխար մեքենան ըրաւ ուսը մեզի. ու ամէն անգամ որ պարիսպէն մաս մը կը փլչի՝ մեքենայէն ալ կտոր մը կը խորտակուի զործածողին ձեռքերէն:

Ժէ դարու վերջէն մինչեւ ԺԹ դարուն վախճանքը երկու հարիւր տարուան ժամանակամիջոց մը, Հայը իր ազատագրութեանը հետապնդեցաւ միօրինակ ձգտումով, սխալներու միեւնոյն կրկնութեամբ. հետեւանքներն ալ պէտք էր ըլլային միեւնոյնը, եւ եղան: Օրին մէկն ալ երկու Խորայէ Օրի, Խրիմեան Հայրիկ եւ Խորէն Նոր-Պէյ,

ժան-կիցեմ մը փնտռելու ելան Եւրոպայի մայրաքաղաքները, ու երբ դատարի ձեռքով դարձան, թշնամիին առջեւ բացը մնացինք անզէն. ետեւնիս ազգային ուժի պղտիկ ամրոց մը պատրաստած չէինք հոն ապաստանելու համար:

Պերլինի Վեհաժողովէն ետքը քսան տարի ալ անցաւ, ու նորէն ամրոցը չչինեցինք: Եւ ինչո՞ւ ալ չինէինք. այսօր Ռուսը պիտի գար Լեզի փրկելու, վաղը Անդլինն:

Յիշատակե՛մ սակայն որ պղտիկ ամրոցը հիմնելու գաղափարը Պերլինի Վեհաժողովէն երեք տարի առաջ յղացուեցաւ, նախնական պատրաստութիւնները տեսնուեցա՛ւ: Վեհաժողովին յաջորդ օրը մեծ հիմնաքար մը դրուեցաւ Վասպուրական: Կըղձամ որ հեղինակաւորանձ նաւորութիւն մը, Պ. Մկրտիչ փորթուղաւեան, որ այլ քարը իր ձեռքովը զետեղեց՝ Ռուսիոյ եւ Թիւրքիոյ Հայոց միաբան ծրագրին իբր գործադրութիւն, յարմար ժամանակին ինքը զրէ այդ հիմնարկութեան պատմութիւնը, եւ անոր ալ քանզումը, որ մեր ժամանակակից պատմութեան էն տխուր էջերէն մէկը կը յօրինէ. ինծի համար է՛ն սըխուր էջը, զի այդ քանզումը ապագային քանզումը եղաւ:

\* \*

Երբ կ'ուսումնասիրենք թէ՛ ինկած ու վերականգնած ժողովուրդներուն, թէ՛ պղտիկէն սկսելով դէպի մեծութիւն հասնող ազգերուն պատմութիւնները, կը համոզուինք թէ միշտ յաջողութեան ապահովութիւնը ունեցած են անոնք որ քայլ առ քայլ են ընթացած: Կէտ մը նպատակ զնելով հոն հասեր են եւ ասան մը կանգ առնելէ ետեւ նորէն յառաջացեր են: Հայ ազգին վերջին դարերու քաղաքական կեանքին պատմութեանը մէջ կէտադրութիւն չի կայ: Ամէն ատեն ուզած ենք ցաաքելով կտրել զերութենէ դէպի ազատութիւն անհուն անջրջեալը, ուստի երբեք չենք յաջողած. միշտ ստեղծուիս կոտորել է:

Հայ ազգին քաղաքական ինքնակրթութեանը համար շատ կը փափազէի հայերէն երկու գրքի հրատարակութեան: Մէկը՝ Բրուսիոյ վերակենդանութեան, միւսը՝ Իտալիոյ ազատութեան պատմութիւնը: Առաջինը մեզի պիտի սորվցնէր թէ 1806ին Իէնայի ճակատամարտէն ջախջախուած Բրուսիան, որ այլ օրը ամէն բան կորսնցուց, եւ որուն թագաւորը իր թագը իբր շնորհք մը կը ստանար Նափոլէոնէն, ինչպէս աշխատեցաւ որ վաթսուն տարի ետքը կարող եղաւ խորտակել Ֆրանսան: Խեղքի եւ կամքի հրաշագործութեան այդ պատմութիւնը ամէն պարտուած ժողովուրդներուն Աւետարանը ըլլալու է: Հոն կը տեսնենք թէ յուսահատելու աստիճան հասած զժբաղղ ազգ մը ինքնամփոփ ուժով անձայն երբ կ'աշխատի իր վերածնութեանը, կէս դար ետքը աշխարհիս էն մեծ ժողովուրդներէն մէկը կ'ըլլայ:

Իտալիոյ ազատութեան պատմութիւնը մեզի շատ մը բաներ պիտի սորվցնէր: Մեծ մարդ մը ազգին ամէն ուժերը մէկտեղ բերելով, անոնք ի մի ձուլելով, կը յաջողի մեծ նպատակին հասնել: Պահպանողականութիւն, Կիւս,

նադիտութիւն եւ Յեղափոխութիւն միանալով Քալուրի մը ձեռքերուն մէջ՝ հայրենիքը կը փրկեն:

Քաղաքատեան ո՛ր եւ է եզր չի կայ Հայոց եւ Բրուսիոյ կամ Իտալիոյ միջեւ: Բրուսիա որքան որ ալ ջախջախուած, Իտալիա ինչքան ալ սկար ու երկպառակ, բայց եւ այնպէս առաջինը անկախ պետութիւն էր, ու երկրորդը՝ Բիէժմոնթէի թագաւորութիւնը իրեն յենարան ունէր: Երկուքն ալ անկաշկանդ գործելու ամէն զիւրութիւն կը վայելէին: Սակայն ինչպէս որ ճարտարագետութեան մէջ պղտիկ տան մը եւ մեծ պալատի մը հիմնարկութիւնները զիտական միեւնոյն օրէնքներուն կ'ենթարկուին, նմանապէս ազգերու պատմութեան մէջ ալ կան ընդհանրական հանգամանք ունեցող օրէնքներ սրտնք մեզի նման ժողովուրդներուն ալ միտքը կը բանան եւ ճամբայ ցոյց կուտան:

\* \* \*

Երբ աս սողերը կը զրնձ, սեպտեմբերի առաջի օրերը, աշխարհի քաղաքական պատմութեան մէջ պարագուկս կազմելու սահմանուած յեղաշրջումներու հաւանականութիւնը յանկարծ կը զրաւէ բոլոր մտքերը: Ռուսիա տիեզերական զէնընկեցութիւն կ'առաջարկէ: Համատեղով մը այս նպատակին իրականացումը հնարաւոր ընծայելու միջոցներուն վրայ պիտի խորհրդակցի: Յաջող ըլլայ ելքը թէ անյաջող, երկու պարագային մէջ ալ Եւրոպայի ու Ասիոյ ապագան մեծամեծ փոփոխութիւններու պիտի ենթարկուի, աւելի կամ նուազ կարճ ժամանակամիջոցի մը մէջ:

Իսկ անդին Գերմանիա եւ Անգլիա սահմանափակ պայմաններով կը գաշակցին: Թիւրքիոյ աշխարհազրական դիրքը որ Նափոլէոնը ու Ալեքսանդր Ա ձարը կասեցուց Եւրոպան ու Ասիան մէջերնին բախնելու խորհուրդներուն ատեն, նոյն ատ դիրքը կը զիւրացնէ Գերմանիոյ եւ Անգլիոյ միջեւ համաձայնութիւն մը: Մէկուն՝ թրքական Ասիան բաժին կ'իյնայ, միւսին՝ թրքական Աֆրիկէն, եթէ Եշիպատոր դեռ կրնայ թրքական կոչուիլ:

Այս գաշակցութեան զրոյցը հիմնաւոր ըլլայ թէ անհիմն, անհերքելի իրողութիւնը այն է թէ Օսմանեան պետութիւնը Գերմանիոյ գերիշխանութեան ներքեւ մտած է:

Թուականը որ կը բացուի մեզի համար աւետարներ ըլլալ կը խոստանայ թէ աղիտաբեր:

Հայ ժողովուրդին վիճակը վտանգաւոր է, վասն զի անձանօթին հանդէպ կը գանուի: Ապագան ապահովաբոր աղիտաբեր պիտի ըլլայ մեզի եթէ նոր կացութիւնը լրջօրէն շտուումնասիրենք եւ ազգային միտքը շուղզեմք ճամբու մը մէջ որմէ զրական օգուաներ քաղենք, քիչ բայց ապահով:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԱՎԱԽԻՆԷ

Ամէն օրնոր լուրի մը կը սպասէինք: Լրագիր, նամակ, բարեկամ մը որ մեզի այցելութեան հուպար, մեր տեղեկութեանց պաշարը կը հայթայթէին: Երբ եւրոպական թերթ մը ձեռուընիս կ'իյնար՝ գողզալով եւ անհամբերութեամբ զայն կը բանայինք կարգալու համար Հայոց մասին նորութիւն մը, յուսատու խօսք մը, բաժանորիչ առողջ մը: — Բայց աւագ, ամէն անգամ զարհուրելի բօթեր էին. կոտորած, սպանութիւն, հրդեհ, ձերբակալութիւն, բազաբական յուսախարութիւնք, եւ ամէն կողմ կը տեսնէինք ընդհանրական վատութիւն: Այլ օրագիր մը բանալը այնչափ կսկծալի դարձեր էր՝ որ սիրտս չարաչար կը խշխշար եւ շունչս կը հասնէր. եւ կարգալէս ետքն ալ ծանրագոյն տխրութիւն մը կը ճուլէր զիս: Գիշերուան մէկ մտաւ պատուհանին առջեւ կ'անցընէինք ծովուն նայելով որ տանը հանդէպ կը պաղպաղէր յաստեայ յատակի նման: Յաճ ձայնով կը մեկնաբանէինք օրուան լուրերը՝ մանաւանդ թէ գոյմերը, կը հառաչէինք, եւ կանայք երբեմն արցունք մը կը կաթեցընէին երեւնալով վրայ՝ որ կարծես վշափ գերագոյն վառմամբ նորանշան կը փողփողէր:

— Այն Աստուած, կ'ըսէին, զան մեզ օգնութեան հասիր:

Յետոյ կը լռէինք:

Վաստի որ տախան եզրը յուսածուփ կը ծածանէր: Կանաչերանդ լապտերներ՝ որ նաւանշան էին՝ տեղ տեղ կը շողային խոշոր լուսաճոխներու նման: Դրացի տնէն՝ ուր մահմաական ընտանիք մը կը բնակէր՝ երկար բերքիլներ կը բարձրանային. երգեմտիկ մը բերել տուեր էին եւ արեւելեան պարի եղանակներ նուագել տալով սրտիս հանդէս մը կատարել կը կեզմէին:

Յաջորդ օրը իմացանք որ Ամասիա սարսափելի ջարդ մը տեղի ունեցեր էր:

Այլ ամենքս ալ հիւանդ էինք, ուղեղնիս կը դատարկանար եւ օշինջ ընելու կամք ունէինք: Մէկ հաստիկ փափաք մը միայն ատամ կրճտել կուտար մեզի — ամէն մէկերնիս կը բաղձայինք ձեռուընիս առճկի մը արեանը մէջ թաթախել: Այն ամէնէն աւելի մահմաականաց ցուցուցած լիբու ուրիւնութիւնը կը կատարեցընէր զմեզ: Վատերը — պարծանքով կը պատմէին իրենց բարբարոս շահատակութիւնները:

Մերունի բարեկամ մը տեսութեան եկաւ: Տխուր էր, սուտ լուր մը անգամ չունէր որ կարենար զմեզ գոնէ բուպէ մը սթափեցընել: Այնչափ խոնջ էինք ամենօրեայ յոյզերէն՝ որ կեզակարծ ենթադրութիւն մը մեզ նպաստաստօր՝ կարող էր զմեզ թեթեւեցընել:

— Լսեցիք, ըսաւ զլուսը տատանելով, Ամասիա կոտորած ըրեր են:

Ամենքս մէկանց նշան ըրինք որ չխօսի: Խեղճ Աննան, մեր սպասուհին, այդ բաղաբէն էր եւ մայրիկը հոգ կը բնակէր տակաւին. բայց աղջիկը որ սեզան կը գնէր՝ լսեց: Երեսները գունատեցան:

— Սուրբ Աստուածամար, պտտաց, մայրիկս արցեօք ինչ եղաւ:

Սակայն պտտաւ մօրաբայրս որ անկիւն մը ննստած կը ծիւղեր ու սաղմօս կը բաղէր:

— Ինչ եղար, Աննա, ըսաւ անպարանքով, ինչ եղար, աղջիկ:

— Մայրիկս, մայրիկս, կը կրկնէր ան, մայրիկս:

— Բան չի կայ, ձեզի բան չի կայ, կը պոռային ամենքը միասին, Մալաթիա կոտորած եղեր է, ձեզի բան չի կայ:

Աննա դոգնացով երեսը ծածկեց ու սկսաւ հեկեկալ: Ի գուր կը ջանայինք զանի խաբել, ե բօթաբերն ալ ի գուր կը ջանար բերած լուրը փոխել: Անհնարին կ'ըլլար զանի համոզելը:

— Մայրիկս, մայրիկս, կ'ըսէր ան, խեղճ մայրիկս, տաճիկները սպաննեցին մօրթեցին, ախ ինչո՞ւ ես ալ հոն չէի:

Աթոռին վրայ ինկաւ արտասուելով: Հուսկ ուրեմն կըցանք սա պարզ գազափարն ընդունել տալ որ եթէ Ամասիա կոտորած եղեր էր՝ պէտք չէր կարծել որ մայրն ալ անպատճառ մեռած ըլլալու էր: Թերեւս տեղ մը ապաստանած էր ան, թերեւս ազատած էին զանի: Կոտուց կամաց արցունքները սրբեց:

— Վաղը մօրեղբօրս կ'երթամ, հառաչեց, նայիմ ան ինչ լուր ունի: Այն Աստուած, ինչպէս մեզի երեսէ ձեզ գեցիր:

Ելաւ խոհանոց իջաւ: Ճաշերնիս շատ տխուր ըրինք. ուղք մտեր էր տուններնիս: Թերեւս երբեք այդչափ ազգուպակէս զգացած չէինք պէպէտքուն բառնելի խոյժութիւնը: Աչօք տեսած վերքդ աւելի ահաւոր կ'երեւայ: Միայն պատառաբաղներու եւ զանակներու շնկոցը կը հնչէր: Ամենքս ալ լուռ էինք: Յանկարծ խոհանոցէն արտալից, թաղմանական եղանակ մը բարձրացաւ. Աննա կ'երգէր: Այն երանի թէ այդ երգը բնաւ լսած չըլլայի. զեռ ախանջիս կը խօսի երկար աւաչը, եւ խոնջութեան ժամերուս միտքս բազորովին տակնուվրայ կ'ընէ:

Միւս օր առաւօտուն կանուխ բազաբ գնաց. մօրեղբայրը օտապաշի էր այնտեղ եւ Աննա կը յուսար իրմէ նոր եւ որոշ սեղեկութիւն մը առնել: Սակայն ան ալ բան մը չէր գիտեր, շատ կանուխ էր որպէս զի բաղաբէն նամակ մը հասած ըլլար: Ծաբաթ մը ահուգողով սպասեց: Երթալով կասկածները կը զրգուէին, օրը հազար ատոր վրայ կը խօսէր:

Վերջապէս օր մը մօրեղբայրը գիւղ եկաւ՝ ուր կը բնակէինք: Հանգարտ կերպարանքով մարդ մըն էր, գանգաղ, ախնածու եւ սակաւախօս: Կօշիկները հանեց ու գուլպայով հիւրանոց մտաւ: Սպասուհին հոգ կը արգէն եւ սրտին կսկիծը մեզ կը յեղյեղէր: Երբ ազգականը տեսաւ՝ աշխուժութեամբ զիմաւորեց զանի:

— Ինչ լուր ունիս, մօրեղբայր, նամակ աոխր բաղաբէն:

— Հա՛, ըսաւ ան ծանրաբարձ՝ կարծես մեզմէ պատկառելով, լուրերը լաւ չեն՝ որդիս գրեր է:

Ու կամաց կամաց ծոցէն թուղթ մը դուրս քաշել սկսաւ :

Անհամբեր էինք :

— Խեղճ աղջիկ, զրուցեց պառաւ մօրաքոյրս, ա՛լ մտմտութեան խենթ է դարձեր: Բան մը գրե՛ր են մօրը վերայ, ան ազատե՛ր է:

Օտապաշին նոյն առաջուան ծանրութեամբ պատասխանեց :

— Չէ՛, քոյրս Սրման ալ անհաւատներուն զոհ է դացեր: Տունը տեղը այրեր են, զինքն ալ միատեղ :

Ամենքս միարեարան սարսափման եւ զայրոյթի քղադակ մը արձակեցինք: Չեղբէն խնցի նամակը եւ կարգացի — մինչդեռ խեղճ Աննան ուշաթափ գետին կ'իջնար: Ո՛հ ի՛նչ նամակ էր, ի՛նչչափ սոսկալի էր անոր ընթերցումը. այն պարզ ուսուցանող սոսկ ուր գրուած էր՝ ահաւոր չորութեամբ կը պատկերացընէր ամբողջ աղէտը: Քանի մը խօսքով կը պատմէր հրեղէն մահը թշուառ կնոջ՝ որ փոքրիկ զաւակ մը գոզը բռնած աներեւոյթ եղեր էր բոցերու մրրիկին մէջը: Եւ այսօր ընտանիքին մնացորդ՝ եղբայր մը, հարս մը, եւ մանչ զաւակ մը տասնեւեօթը ասրեկան՝ բոլորովին անօգնական փողոցը մնացեր էին, եւ հազիւ հազ կրցեր էին գիւղը մարագ մը ապաստանել:

« Անօրէնները, կը գրէր եղբայրը, ինչ ունինք չունինք ատին տարին, բան մը չլծողուցին: Օրօրոցի շորերը անգամ գողցան: Կ'ամչնամ՝ գրելու, բայց հարսերնիս գրեթէ մօրէ մերկ է, եւ մարաղին յարկերովը փաթթուած նստած է: Կ'աղաչեմ՝ շուտ օգնութեան հասիր, ստակ ու հաղուստ խաբէ, թէ չէ անօթի ծարաւ ու մերկ պիտի մեռնինք: Լսեցինք թէ Գալուստենց տունն ալ աւար աւեր ըրեր են: Բոլոր եզները քշեր տարեր են: »

Այս նամակը սիրտս արիննեց, բայց առաւել եւս զիս կըքոտեց այդ մարդոց ցոյց տուած զգացողութիւնը: Ատոր զրոզը եւ օտապաշին զայրոյթ չէին իմանար՝ այլ յուսահատ տխրութիւն մը: Վրէժինդրութեան խօսք չէին գտներ՝ այլ դառնալից կսկիծի:

Պէտք եղաւ բժշկին զիմել, վասն զի աղջիկը չէր ուշաբերեր: Եւ շատ աշխատանքէ ետքը միայն խելքը դուրսը բերինք: Սակայն միտքը բոլորովին ընդարմացեր էր, միակերպ կը տքար, զլո՛ւսս, զլո՛ւսս, կը պտար: Գացի բովը նստայ: Կարմիր վարչամակ մը պինդ կապեր էին ճակտին՝ զոր մէկ կողմէն միւսը կը դարձնէր: Բազուկները վերմակներէն դուրս հանած՝ ասպին անդին կը զարնէր, եւ անդադար՝ զլո՛ւսս կ'աղաղակէր:

Իրիկուան դէմ յանկարծ անկողնէն դուրս ցատքեց, եւ բորիկ՝ սկսաւ դէպի դուռը վազել: Շտապեցի ետեւէն հասայ, բռնեցի զանի. բայց ահագին ոյժ մը ստացեր էր, եւ դժուարութեամբ կարող կ'ըլլայի զանի նուաճել:

— Ո՛ր կ'երթաս, Աննա, ո՛ր կ'երթաս, կ'ըսէի, խենդեցա՛ր. հիւանդ ես, պառկէ՛:

— Թողէ՛ք, թողէ՛ք, կը պոռար ան, թողէք զիս, երթամ՝ մայրս պիտի տեսնամ:

— Մայրդ ո՛ր պիտի տեսնաս:

— Թողէ՛ք, թողէ՛ք, քաղա՛ք պիտի երթամ:

Բայց մէկէնիմէկ լոնց. մահճին եզրը նստաւ, ստուընները գետնին վրայ, ու երգեց: Երգեց այն տրտում մահերգը զոր քանի մը օր առաջ անգուլ կ'եղանակէր: Ի՛նչպէս անոր խիստ ամօթխածութիւնը նուազեր է, կը խորհէի զարմացմամբ: Կապուտակ աչուրները այնչափ տարօրինակ ակնարկութեամբ ապուշ կը նայէին, որ ահամայն զլուսս մէկզի գարձուցի:

Խեղճ աղջիկը խելագարեր էր:

Չկրցանք բժշկել: Առաւօտները կ'իլլէր սնտուկ պտուրաստիւու. քաղաք կ'ուզէր երթալ. մենք ամէն իրիկուն սնտուկը կը պարպէինք: Փափաք մը ունէր այնչափ աւուր՝ որ պէտք եղաւ զայն կատարել. — խնայողութեամբ գումարած պահած գրամը մահմուտիէ ոսկիքերու փոխել խնդրեց, որպէս զի վզին շարոց մը շինէ: Օրը քանի մը անգամ զայն կը կապէր եւ հայելոյն առջին անցած ինքզինքը կը դիտէր:

— Երբ քաղաք երթամ, կ'ըսէր, այս շարոցը պիտի գնեմ:

— Մի՛ մտմտար քաղքիդ վրայ, կը պատասխանէին կանայք, ան ա՛լ չի կայ:

— Ի՛նչպէս չի կայ, պիտի երթամ՝ մայրիկս տեսնամ:

— Մայրիկդ մեռաւ՝ գիտես, ա՛լ ո՛ր պիտի երթաս:

— Գիտեմ որ մայրիկս մեռաւ, բայց հարկաւ մեռելը պահած են, կ'ուզեմ մեռելը տեսնալ:

— Մեռելը մինչեւ հիմա պահած չեն:

Ան երեանիս կը նայէր կը ժպտէր խորհրդաւոր կերպով ու կը դառնար իր ոսկեգրամները դիտելու: Յետոյ կը սկսէր երգել այն անոյշ տրտմալից եղանակը որ զլուսս մէջ կը մնայ:

ՎԱՀՐՈՄ ՍՎԱՃԵԱՆ

Բարիդ.

ՔԻԻՐՏ ՅԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայ պատմագիրները Քիւրտերը Մարերէն ծագած կը կարծեն. իսկ երոպացի հնագէտներուն շատերը կ'ընդունին որ անոնք հին Գաղղէացիներու սերունդէն առաջ եկած են, որոնք հաստատուած են շատ կանուխէն Տիգրիսի հովիտին մէջ եւ կամաց կամաց այդ տեղերու սեմական ցեղերուն յաղթելով՝ հիմը վրած են ուժով պետութիւններու, որոնք Բաբելաստան եւ Ասորեստան անունով ճանչցուեցան:

Նինուէի կործանումէն յետոյ Քիւրտերը միացան Մարաց. Կիւրտոէ վերջ՝ Պարթեւաց եւ Սասանեան իշխանութիւններուն տակ ինկան. ԺԱ դարէն վերջ քիւրտ շէյխեր սկսան անշատ իշխանութիւններ հիմնել Սիւրիոյ, վերին Միջագետքի եւ Փոքր Ասիոյ մէջ. ԺԳ դարուն Քիւրտերը իրենց իշխանութեան կատարին հասան:

Մանկիւններու եւ Թաթարներու արշաւանքին աստե՛ն Քիւրտերը իրենց լեռներուն մէջ քաշուած՝ մնացին անվըտանդ. հոսանքը եկաւ անցաւ միայն դաշտային ժողովորդներուն վրայէն. բայց երբ Օսմանցիները, Պարսիկները եւ Ռուսները մնայուն կերպով աւեր եղան այդ երկիրներուն, Քիւրտերն ալ այն աստե՛ն բնականաբար բաժնուեցան այդ երեք պետութիւններուն մէջ:

\* \*

Հայերուն մէջ մինչեւ այսօր տարածուած գաղափար մըն է որ Կարգեալ լեռներու Քիւրտերը իրենց անկախութիւնը պահելու համար մահմետականացած Հայեր եղած ըլլան: Նոյն իսկ այսօր տակաւին կը տեսնուին քիւրտ ցեղեր, որ հայ նախարարութիւններու անուններ կը կրեն, ինչպէս Մամլեքանիները (Մամիկանեան), Ռաշքիները (Ռշտունի) եւայլն: Տուտիքիներու (երկու կիկղեցի) աւանգութիւնը կ'ընդունի տակաւին որ Հայերէ յառաջ եկած են իրենք: Այս գաղափարը բոլորովին սխալ չէ եւ մարդաշահական գննութիւններ կուզան հաստատել զայն:

Քիւրտերը, որ ամէն պարագայի մէջ համասեռ ցեղ մը չեն, գլխաւորաբար կը բնակին Տիգրիսի վերին ու միջին մասերուն արեւելեան եւ հիւսիսային կողմերը, Եփրատը եւ Արաքսը եզերող լեռները: Բայց այս սահմանները շատ անորոշ են եւ այսօր քիւրտ կարելի է գտնել Ռուսական Հայաստան, Փոքր-Ասիա, Միջագետք, Սիւրիա, արեւմտեան եւ հիւսիսային Պարսկաստան, մինչեւ Պարսից ծոց, մինչեւ Աֆղանիստան, Պելուճիստան եւ Կեդրոնական Ասիա:

Քիւրտերը կը հաշուուին իբր	1,836,000:
Ասիական Թիւրքիա	1,300,000
Պարսկաստան	500,000
Ռուսական Հայաստան	30,000
Աֆղանիստան եւ Պելուճիստան	5,000
Եւրոպական Թիւրքիա	1,000

Էրզրումի, Վանայ, Պիթլիսի, Տիւրքմէնի, Խարբիլի, Հալեպի վիլայէթները կը պարունակեն ամէնէն շատ Քիւրտերը: Ռուսիոյ Քիւրտերը, որոնք Գարմանձա կը կոչուին, քանի մը ցեղերու բաժնուած են: Կարեւոր ցեղերը կը ստորաբաժանուին պզտիկ ընկերութիւններու, որոնք ունէին իրենց մեծաւորը կամ ծերը, զոր ցեղագետը կ'ընտրէր: Ամէն խնդիր եւ զատ կը տեսնէր մեծաւորը կամ ցեղապետը, պատիժ կամ իրաւունք անոնք կը տնօրինէին. բայց ժամանակէ մը ի վեր ռուս կառավարութիւնը իր իրաւասութիւնը կրցած է ասարածել այդ ցեղերուն մէջ: Թիւրքիոյ քիւրտ ցեղապետներու շատերը կը վայելեն տակաւին այս իրաւունքները:

\* \*

Քանի մը ընտանիք միանալով կը կազմեն Օպա մը որուն զուտը կը գտնուի աղա մը (եւրոտի մը տէր): Քիւրտերուն մէջ հողի անհատական սեփականութիւն չի կայ.

անհատական սեփականութիւնը միայն կարասիներու եւ հօտերու համար է, իսկ հող ըլլալով Քիւրտերը գոմ եւ ձմերանոց միայն կրնան անհատական սեփականութիւն դարձնել: Սակայն քանի մը տարիէ ի վեր Քիւրտերն ալ կառավարութեան հարկապարտ արձանագրուելով իրաւունք կը ստանան անհատական հողերու աւեր ըլլալ:

Եւրոտը վրան մը կանգնելու համար պէտք եղած տեղը կը նշանակէ բառին անձուկ նշանակութիւնովը. բայց ընդարձակ առումով՝ այդ վրանին բռնած տեղէն զատ, որ օպայի (8-20 ընտանիք) մը անգամները պէտք է պարունակէ, իր մէջ ունի նաեւ բարձր արօտավայրերը եւ մարգերը որոնք իրենց հօտերուն կը բաւեն: Օպային ամէն անգամի պարտքն է պաշտպանել եւրոտին սահմանները օտար հօտերու դրաւումէն: Օպային մէջ ոչ ոք կրնայ տէր ըլլալ կտոր մը հողի. օպային մեծը միայն երեքիմ ունի կտոր մը տեղ իր ձին կապելու համար:

Գարնան սկիզբը թողլով ձմրան զեղերը, կ'ելլեն արօտավայրերը ուր կը հաստատեն իրենց եւրոտերը:

\* \*

Քիւրտերը պերճանքը ինչ է չեն զիտեր, դարունէն աշուն իրենց անունը կը բազկանայ կաթէ, մածունէ, պանիրէ, կաթով ձաւարէ: Միտը կը սիրեն բայց չեն ուզեր մօրթել իրենց ոչխարները, կ'աշխատին իրենց ձմրան չոր մսի պաշարը պատրաստել զողջուած ոչխարներով: Թուրք խաշնարածներու պէս իրենց ոչխարը մեռած ատեն կը մօրթեն միայն:

Օրուան ճաշերուն իրիկուանն է ամէնէն ճոխը, որու հետեւ մութին կը սպասեն զողջուած ոչխարը մօրթելու եւ եփելու համար:

Քիւրտերը անօթութեան դիւրաւ կը տոկան, բայց զտած ատենին ալ այնքան անյազ կ'ուտեն որ սողուններու պէս ժամերով անշարժ կը մնան:

Պէտք է չմոռնալ սակայն որ հարուստ վրաններու տակ զիւրակեցութեան եւ մաքրութեան ամէն պայտան կը տեսնուի:

Պ. Շանդր Կէօքչայի բարձանց վրայ (2,925 մէթր) հաստատուած Ռաշքիներու վրայ խօսելով կ'ըսէ. «Այդ Քիւրտերը սրտնք ձմեռը Սուրմալու գիւղը կ'անցընեն, գաւառին ամէնէն հարուստներն են: Ընդարձակ եւ տաքուկ վրանը, ճոխ ու վայելուչ տարազը, փառաւոր գորգերու աւատութիւնն է որ ամէնէն առաջ այցելողին աչքին կը զարնէ: Մեզ հիւրասիրող մեծաւորին քով երթալով չիրցանք զարմանքնիս բռնել եւրոպական ձեւով զարդարուած սեղան մը տեսնելով. սնակ, դդալ, պատառաքաղ, դանակ, գաւաթ, բան մը չէր մօոցուած. նոյն իսկ կերակուրներն ալ բնաւ չէին տարբերեր հայ տան մը տիկնոջ պատրաստելիք կերակուրներէն. զինին միայն կը պակտէր: Բնաւ զարմանալի չէ սակայն որ այդ Ռաշքիներուն մէջ քանի մը հայ ընտանիքներ գտնուին եւ կամ գտնէ քանի մը հայ կիներ, որոնք առեւանգուած ըլլան, ինչ որ սովորական է այս Քիւրտերուն համար:»

\* \*

Եզիտներէն զատ, մնացած Քիւրտերը գրեթէ բոլորն ալ սիննի են. Պարսկաստանի մէջ փոքր մաս մը կայ շէիա, բայց ինչ որ ալ ըլլան՝ խախուտ է հաւատքին եւ Քիւրտերը կրօնքի վրայ որոշ զաղափար չունին:

Յատուկ գրականութիւն չըլլալով կրօնական դրքերը արարերէն են եւ մէյմէկ հատ շէյխերուն ձեռքը կը զբտնուի միայն, բայց շէյխերն ալ շատ բան չեն հասկնար անկից: Իրենց տգիտութիւնը կատարեալ եւ անլորդապաշտութիւնը չափազանց է եւ շէյխերը ու վհուկները ուզածնուն պէս կը շահագործեն ժողովուրդը:

Ոչ մղկիթ ունին, ոչ աղօթատեղի, օրը երեք անգամ նամազ կ'ընեն լուացուելէ յետոյ (ապուտա), «թէւե, կ'ըսէ Պ. Շանգր, երբեք չտեսայ բիւրտ մը որ հասարակութեան առջեւ իր նամազը բնէր ինչպէս կ'ընեն թուրքերը:»

Իբր խլամ՝ քիւրտը զիւր Մէհմէտի եւ անոր երեք յաջորդներուն անունը, Էօմէր, Օսման եւ Ապու-Պէքիր. կը հաւատայ որ աշխարհս բարձրագոյն էակէ մը ստեղծուած է, որուն մարգարէն Մէհմէտն է, կը հաւատայ արքայութեան ու գետիքի, 30 օր ծով կը բռնէ, խոզնի չուտեր եւ քրիստոնեաները կը նկատէ իբր անհաւատ (կեալուր):

Քիւրտերը անլորդապաշտ են. կը հաւատան թըլըսումի, նուսխայի, ֆալի, հոգեփոխութեան. կը հաւատան որ մեծագոյն մեղաւորը մեռնելէն եօթը տարի վերջ շան մը կերպարանքով աշխարհ կուգայ:

Արեւը եւ լուսինը քուր-աղբար են, որոնք անընդհատ իրարու ետեւէ կը վազեն: Լուսինը, որ եղբայրն է, զիշերը ընտրած է, որովհետեւ քոյր-արեգակը կը վախնայ զիշերը մութուն չար սգիններով լեցուն երկնքին մէջ պարտիլ: Ամէն ամիս լուսինը կը մեռնի արեւին համար ունեցած սիրոյ վիշտէն ու կը վերածննի:

\* \*

Պ. փորթուզաբեան կը կարծէ որ Քիւրտերը երկու որոշ դաւառաբարբառ ունին, մէկը Քերմանճանիքուն լեզուն որ հին պարսկերէնէն կը ծագի (ֆարսի), միւսը Զազայի լեզուն որ առաջինին մէկ աղաւաղումն է: Քիւրտերը զիր գրականութիւն չունին, բանաստեղծութիւնին պարսկերէնէ փոխ առնուած է. ժողովրդական բանաստեղծութիւնը լսւ լսւ լսւ, լսւ... ներու ահանլի եւ անխմանալի խանուրդ մըն է:

\* \*

Թուրքիոյ մէջ Քիւրտերը երկու որոշ գատի կը բաժնուին. նստուկ կեանք ունեցողները որոնք երկրագործութեամբ կը զբաղին, որոնք աւելի քաղցր ու աւելի կանուխաւոր զիմաղիմ մը ունին, եւ վրանաշրջիկները որոնք խաշնարած են, գողութեամբ եւ թալանով կ'ապրին. առանց զիմաղիմը աւելի կոշտ է, բնութեամբ աւելի վայրագ են, իմացականութեամբ աւելի ստորին, շարժումներին վտառ է որոշ, կերպերին՝ երկրին տէր, զբացիներէն

բարձր եղած ըլլալու հաւատքը ունեցողի մը կերպն է, ուրան ուղղակի հետեւանքն է գողութիւն, յափշտակութիւն, սպանութիւն:

Այս ցեղին ամէնէն վայրենի եւ զարհուրելի մասը կը բնակի մեծ ու փոքր Զոփի միջտեղերը, Ուրմիոյ լճին հարաւային կողմը, Հէքեարիի, Պիլպասի, Ճաֆի, Ճէլալիի, Տէրսիմի կողմերը:

\* \*

Եզիտները, որոնք մասնաւորապէս Տիարպէքիի հարաւային կողմերը կը բնակին, քիւրտեր են, սակայն իրենց ցեղաչիցներէն վերջին աստիճան կ'արհամարհուին եւ պատճառն ալ միմիայն իրենց դաւանանքն է:

Եզիտները կը հաւատան բարի եւ չար սգիններուն, Աստուծոյ եւ սատանային: Բաց աստի կը պաշտեն արեւը իբր Աստուծոյ արգարութեան պատկերը եւ մարդկութեան կենսատու սկզբունքը: Եզիտը առտուն ելածին պէս արեւելք կը դառնայ, ձեռքերը վեր առած՝ երեք անգամ զուտը կը խոնարհեցնէ, ինչ որ կը կազմէ իր բոլոր օրուան աղօթքը: Եզիտները նամազ չունին, ծով չեն պահեր եւ զինի կը խմեն:

Հին արեւորդիներուն պէս կը պաշտեն բարտին, սակայն նկատել պէտք է որ Եզիտները իբր այս պաշտամունքին սլաւոնա Յիսուսի խաչին այդ ծառին փայտէն շինուած ըլլալը կուտան, ինչ որ բոլորովին կը տարբերի արեւորդիներու պաշտամունքէն:

Եզիտները ինքզինքնին Լուսաի (Յիսուսեան) կը կոչեն եւ իրենց արհեստ եղած գողութիւնը կ'արգարացնեն ըսելով որ Յիսուս արտօնած է զայն ի յիշատակ իր աջ կողմը խաշուած աւազակին:

Չար ոգին կը յարզեն՝ անոր փորձանքներէն ազատ թալու համար. նաեւ կը կարծեն որ սատանաները անկեալ հրեշտակներ են, որոնք պիտի կրնան օր մը իրենց բաւութիւնը գտնել ու այն ատեն բարեխօս ըլլալ իրենց մեղքերուն:

Եզիտները կը յարզեն Յիսուսը, եօթը հրեշտակապետները եւ հայ եկեղեցիին հայրերը, մասնաւորապէս Գրիգոր Լուսաւորիչը: Բայց ամէնէն յարզելին է Շէյխ Ատը որ ազգային մարգարէն է եւ օրէնսդիրը: Ան է որ Աստուծոյ բացարձակ հաւատք, անսահման սէր, մարգարէներու, ծնողներու յարգանք, ազգականներու սէր, փոխադարձ օգնութիւն, աղքատներու ողորմութիւն, Աստուծոյ առջեւ մարդոց հաւասարութեան սկզբունքները զբաւ: Շէյխ Ատ արգիլեց սուտը, գրպարտութիւնը, բաժարասանքը, սպանութիւնը, վրէժնւրութիւնը, շնութիւնը, մինչեւ երեք պարս ամուսնութիւնը:

Եզիտները աղօթատեղի չունին, տարին անգամ մը ուխտի կ'երթան Շէյխ Ատի գերեզմանին:

Կը հաւատան հոգիի անմահութեան: Իրենց մեռելները երեսնին արեւելք վարձուցած եւ ձեռքերնին կուրծքերնուն վրայ խաշածեւ զրած կը թաղեն:

Երկու գասակարգի կը բաժնուին. կղերական եւ աշ-

խարհական: Աշխարհականները կը բաղկանան ազնուականներէ եւ սոսկականներէ: Ստակն է որ մէկը ազնուական կ'ընէ, ինչպէս անոր պակասութիւնը ազնուական մը սոսկականի կը վերածէ: Կղերական դասը վեց աստիճանի կը բաժնուի, շէյխերէն մինչև մասրէրէցները, որոնք Շէյխ Ատի տան ծառաները կը կոչուին:

Եղիաներուն ամէնէն բարձր անձնաւորութիւնը շէյխն է, անկից վերջ կուզայ էմիրը (ներկայ էմիրն է Միրզա պէյը որ Մուսուլի վիլայէթը Պատրիէի մէջ կը բնակի. իր ընտանիքը եղիտ ազնուականներուն ամէնէն հինն է:)

Ամուսնութիւնը անլուծելի է, շնութիւնը միայն իրաւունք կուտայ ամուսնալուծութեան եւ յանցաւոր ամուսինը չի կրնար վերամուսնանալ:

Եղիաներու ծագումը շատ վիճելի է. Շէիտ իսլամները կը կարծեն որ յափշտակիչ Եղիտէն յառաջ եկած են, որ Հասանը եւ Հիւսէյնը սպաննելով խալիֆայութիւնը գրաւած էր: Յեզական աւանդութիւնը կ'ուզէ որ Երտանէն սերած ըլլուի, Երտան որ Մէհմէտի, Յիսուսի ժամանակակից եւ անոնց կենակից էր: Ուրիշ կարծիք մը Եղիաները հայ եկեղեցիէն հերձուած մը կ'ուզէ նկատել եւ կամ հին շարեւապաշաներու ու զիւապաշաներու մէկ սերունդը:

Իսկ Պ. Փորթուզլեան կը կարծէ որ այս ցեղը ըՍպահանի կողմերը գտնուող Եղզա եւ Եղզաէկիր քաղաքներու բնիկներէն սերած են: Այդ քաղաքի բնակիչները մինչև այսօր կրօնապաշտ եւ արեւապաշտ են ու իրենց կրօնական գաղափարները շատ կը համաձայնին Եղիաներու դաւանանքին հետ: Պ. Փորթուզլեան իր կարծիքին իրր ապացոյց կ'աւելցնէ նաև որ Եղիաները իրենք զիրենք ոչ թէ Եղիտի այլ Եղտի (Եղտ քաղաքէն) կը կոչեն:

Եղիազարօֆ կ'ուզէ ազգակցութիւն մը գտնել Հայոց հետ, լեզուի նոյնութիւն մը եւ մարդաբանական տիպարի նմանութիւն մը մէջտեղ բերելով: Սակայն այդ լեզուի նոյնութիւնը մինչև այսօր բնաւ չէ հաստատուած, իսկ մարդաշափական զննութիւնները կը ցուցնեն որ եղիաները քիւրտեր են ընդհանրապէս, թէև խուճբեր կան որոնք Հայերուն աւելի կը յօտանան ինչպէս պիտի տեսնենք քիչ մը վերջ:

Եթէ Հայերու եւ եղիաներու միջև տեսակ մը համաձեւութիւն կայ, ոչ թէ արեւակցութեան մը արդիւնքը պէտք է նկատել, այլ նման ընկերական վիճակի մը ենթակայ ըլլալին, որուն կ'աւելնայ կրօնական սկզբունքներու նոյնութիւնը:

Պէտք է ընդունիլ սակայն որ Եղիաները Քիւրտերէն աւելի համերաշխ ոգի ունին եւ աւելի ընկերակամութիւն, բարեբերին աւելի քաղցր է, աւելի հակամիտութիւն կը տեսնուի խաղաղ զբաղումներու, կը սիրեն երկրազորութիւնը, մինչդեռ Քիւրտերը ընդհանրապէս կը խորշին անկից: Եղիաներն ալ թէև չեն թողած վրանաբնակ կեանքը, բայց միշտ իրենց ձմրան զիւղերուն քովերը կը հաստատան աւրան վրանները, փոխանակ Քիւրտերուն պէս 2-3,000 մէթր բարձր լեռներու կողերը ելլելու:

\* \* \*

Ընդհանուր կերպով զիտելով Քիւրտերու կերպարանքը վայրենութիւն մը կը յայտնէ, իրենց զիմագծերը կոշա են, աչքերնին որ վայրազ փայլ մը ունին, փոքր են եւ ակնակապիճին մէջ միտուած, գոյնով զրեթէ միշտ թուի են, հասակով բարձր ու չոր, մեծ ուժ ունին: Գնացքնին ապահով է, զլխու կեցուածքը հպարտ եւ իրենց նայուածքը վերին յանդգնութիւն մը կ'արտայայտէ:

Պ. Շանգը, որ իր զննութիւններուն առարկայ ըրած է 332 քիւրտ (62ը կին), հետեւեալ կազմախօսական եւ մարդաշափական արդիւնքներուն կը հասնի:

Քիւրտերուն մազերը եւ աչքերը 66 0 0 համեմատութեամբ սեւ են. եւ որովհետև զննութեան առարկայ եղող Հայերը եւ Քիւրտերը զրեթէ նոյն թիւերը կը ներկայացնեն, 341 եւ 332, ներքիլ է շատ մերձաւորապէս երկու ցեղերուն տուած արդիւնքները իրարու հետ բաղադատել: Այսպէս.

	Հայ	Քիւրտ
Թուի աչք	192	206
Միջին «	113	118
Կապոյտ «	36	8
Թուի մազ	194	204
Միջին «	109	118
Դեղին «	38	10

Քիւրտերուն քիթը որ ուժով գծով մը կ'իջնէ՝ իրենց զիմագծին յատկանիշը կը շեշտէ. յաճախ ուղիղ է 37 0 0, երբեմն ուղիղ եւ վայրահակ 17. 78 0 0, իսկ 45 0 0 կարնթարդ է եւ վայրահակ:

Քիւրտ կիներուն քով ուղիղ քիթի համեմատութիւնը կը հասնի մինչև 66 0 0ի:

Քիթի նշանակը, որ ցեղերու բաժանումին մէջ ամէնէն կարեւոր տարրերէն մէկն է, Քիւրտերուն քով աւելի կը բարձրանայ, որովհետև այդ միջինն է 66. 03, մինչև ինչ Հայոց բացարձակ միջինն է միայն 64. 81.

Քիթի նշանակ	Հայ	Քիւրտ
60 էն վար	58	42
60 — 70	176	132
70 — 80	94	114
80 էն վեր	13	39

Ուրեմն Քիւրտերուն քիթի բարձրութիւնը աւելի է քան Հայերուն քով, որով նրբաքթութիւնը ալ աւելի շեշտուած է առաջիններուն քով:

Քիւրտերու բերանը միջին լայնութիւն մը ունի եւ շրթները բաւական նուրբ է. բերնի լայնութիւնն է 46-51 միլիմէթր:

Ամէնէն մեծ բերանը Ռաշքիներու մէջ կը տեսնուի եւ ամէնէն փոքրը Պուրաքիներուն: Կզակը շատ կանոնաւոր է, բայց շատ ալ խոշոր. ակոսները կատարեալ են:

Ականջի միջին երկայնութիւնն է 62. 5 սմ. եւ լայնութիւնը 37 սմ (Հայերու քով 60-35): Էրեկմարդոց

քով ականջը դէպի առաջ կախուած է, որուն պատճառն է բնականաբար փաթթոցի սովորութիւնը:

Քիւրտերուն զէմքը նեղ է. զիմական միջին նշանակին է 99. 27 (Հայոց քով 100. 72 է):

Յօնքէն կզակ եղած բարձրութիւնն է 137 մմ. (Հայերուն քով 139). երկու այտասկրններուն լայնութիւնն է 136 մմ (Հայերուն քով 140): Քանի մը ցեղերու մէջ կը տեսնուի կարճերեսութիւն մը 104 և մինչեւ 107 նշանակով, ինչպէս Սօֆուզանլըի, Միլանլըի, Պիլիգանլըի Քիւրտերը, այնպէս որ այդ ցեղերը իրենց յատկանիշով կրնան մտնել Հայերուն: Սակայն Քիւրտերուն մեծ մասը երկայնքերես է, որուն պատճառն ալ երկայտային արածազօն փոքր ըլլալն է որ երբեմն մինչեւ 122 մմ. ի կ'իջնայ:

Երեսի նշանակ	Հայ	Քիւրտ
95 էն վար	40	55
95 — 100	76	108
100 — 105	140	121
105 էն վեր	83	48

Քիւրտերուն զուտը աւելի երկայն է քան լայն. շատ կարեւոր յատկանիշ մըն ալ որ այդ ցեղը Հայերէն կը հեռացնէ: Գլխաշափական նշանակին է 78. 53, բայց երբ ընդհանուր միջինէն դուրս հանենք Պիլիքանլը ցեղը, որ 83. 87 նշանակ ունի ու Հայերուն պէս կարճագանի է և հաւանականաբար ուրիշ քանի մը ցեղերու նման Հայերէն սերած է, Քիւրտերուն զլխաշափական նշանակը կ'իջնայ մինչեւ 78. 38ի:

Քիւրտ կիները աւելի կարճագանի են քան էրիկմարդերը. կիներու քով զլիս ձեւափոխութիւնը գրեթէ ոչինչ է, մինչդեռ մարդոց քով յաճախ կը տեսնուի, ինչպէս Սարտար Պուլաքի, Թոխմախոլի, Այլըճաի, Սօֆուզանլըի և Պիլիքանի Քիւրտերուն քով:

Գլխաշափական Հորիզոնական նշանակ	Հայ	Քիւրտ
75 էն վար	1	55
75 — 80	20	142
80 — 85	119	113
85 էն վեր	201	22

Մինչեւ հիմա քննութեան առարկայ եղած 18 Եգիպտոսի կուտան հետեւեալ զլխաշափական նշանակը

4 (կօթիկի կողմէ)		88. 15
3 (Պ. Շանդրի «	կովկաս	72. 61
3 « «	«	78. 61
8 « «	Սիւրիա	86
Ընդհանուր միջին		81. 12

Այս թիւերուն իրարմէ ունեցած խոշոր տարբերութիւնը կը ցուցնէ որ Եգիպտոսը համասեռ ցեղ մը չեն, ու այսօր անշատ ցեղ մըն ալ չեն կրնար ներկայացնել: Եթէ իրենց 72-79 նշանակովը 6 հոգի կը մտնեն երկայ-

նագանի բիւրտերուն, 86-88 նշանակով ալ (12 հոգի) կը խառնուին կարճագանի Հայերուն: Անցողաբար նկատել կուտանք որ Անտարիկները, Թախտաճիները և քանի մը ուրիշ ցեղեր իրենց զլիս ձեւովը շատ կը մտնեն Հայերուն:

\* \* \*

Մինչեւ հիմա մեր տեսածներէն կրնանք հետեւցնել որ Հայաստանի հողին վրայ տարբեր տարբեր ժամանակ տարածուած Ասորեստանցիներէն, Պարսիկներէն, Հրեաներէն, Արաբներէն, Թուրքո-Մոնղոլ հրոսակներէն շատ մը խառնուրդներ կազմուած են այդ երկրին բնիկներուն մէջ: Հայկական հին տիպարը սակայն կրցած է պահուիլ իր անարատութեանը մէջ երկրին մեծ մասին վրայ. իսկ տեղ տեղ կազմուած են խառնուրդներ, որոնք երբեմն Հայերուն կը մտնեն, երբեմն ուրիշ գրացի տիպար ցեղի մը: Օրինակի համար Երեւանի և Վերին Միջագետքի մէջ այնպիսի բիւրտ ցեղեր կան, որոնք իրենց գանկաշափական նշանակներովը բոլորովին կ'անջատուին բիւրտ ցեղէն և կը մտնեն Հայ տիպարին, ինչ որ կը նշանակէ թէ այդ ցեղերը ամբողջովին Հայեր եղած են ու քաղաքական զէպքերու պատճառաւ իրենց լեզուն ու կրօնքը կորսնցնելով բիւրտերուն խառնուած են: Այսպէս երբ գանկաշափական նշանակները զատ զատ կեդրոններու վրայ առանձին քննենք, կը տեսնենք որ Հայերը միայն Տիգրի և Հաճընի մէջ Քիւրտերուն միջին նշանակը ունին, իսկ Պիլիքանի (Երեւան), Պոտասի (Պիլիկա), Վերին Միջագետքի, Սէյլանլըի (Պայազիտ), Պօքքանլըի (Վան) Քիւրտերը կը մտնեն Հայերու ընդհանուր միջին տիպարին:

Հայոց մէջ համացեղութիւնը աւելի լաւ պահուած է քան Քիւրտերուն մէջ, ինչ որ կը ցուցնէ թէ մեր մէջ դուրսէն խառնուրդ բիւրտ եղած է և եղած խառնուրդներն ալ անշատ կէտերու վրայ են: Ղարապաղի, Արաքսի, Կուրի հիւսիսային ափերուն վրայ ցեղը շատ կը մտնայ ընդհանուր միջին տիպարին, իսկ աւելի վարերը, որ հրեայ և արաբ ազդեցութիւնը կրած է ժողովուրդը, սեւ մական տիպարը կը շեշտուի:

Մեզի գրացի և այսօր քաղաքական մեծ նշանակութիւն առած տարրի մը վրայ ալ երկու բառ գրած ըլլալու համար ըսենք որ Օսմանցիները տարացեղութեան ամէնէն արտակարգ աստիճանին կը հասնին: Եւ արդարեւ ինչպէ՞ս կարելի է, կ'ըսէ Պ. Շանդր, որոշ տիպար մը գտնել անանի ցեղի մը քով, որուն կազմութիւնը այնքան խնդ է: Օսմանցիները, որոնք թուրք բարբարոս հրոսակներէ կազմուած և մոնղոլ ցեղերու խառնուած են, իրատ շատ անգամ արին փոխած են յաղթուած ժողովուրդներու խառնուրդովը: Երբ այդ ցեղին վրայ մարդաշափական զննութիւններ կատարենք գանկաշափական կեդրոններու վրայ՝ այնպիսի տարբեր արդիւնքներու կը հասնինք որ ընդհանուր միջին մը գտնելը շատ դժուար կ'ըլլայ և ցեղը տիպարի մը վերածելը անկարելի, ինչ որ նոյն բանը չէ Քիւրտերու կամ Հայերու համար:

Հայ տիպարը շատ հին ժամանակէ ի վեր ճանչցուած որոշուած է, կարգ մը ասորական հարթաքանդակներու վրայ կը աննուի ան արդէն: Իսկ Պ. Շանդրի հետազոտութիւնները կրցած են նշանաւոր ազգագէտը սա եզրակացութեան հասցնել որ Ասիոյ մէջ կարգ մը երկրորդական ժողովուրդներ կան, որոնց կազմախօսութիւնը եւ ազգազրութիւնը թոյլ կուտան որ Հայ ցեղին պատկանին:

Այս հայաձեւ (arménoï'de) ժողովուրդներն են նախ կարգ մը Բիւրա ցեղեր, յետոյ Անտարիէները, Թահաուսները, Ղըլըլպաշները, Պէթաշները, Մէթուալիները, Եզիսներուն մէկ մասը եւ կարգ մը սերի ժողովուրդներ, որոնք այսօր ո՛չ կրօնքով, ո՛չ լեզուով իրենց մայր ցեղին կը վերաբերին:

ԱԼՏԷՊԱՐԱՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

Լոնտոն, 10 սեպտեմբեր

Մաքերու վիճակացոյցը. — Կովկասեան հեղինակութիւն մը. — Շիշափառ գիրքը. — Արդարացում. — «Հոս հոս»-ի ծագումը. — Մտասիպար հոսհոսը. — Հոսհոսներ. — Հայութեան պատկեր մը:

Հայոց մաքի բնաշըջումին պատմութիւնը ուսումնասիրելու լաւագոյն մէթոտներէն մէկը պիտի ըլլար իմանալ երկրորդ սպաղրութեան արժանացած մատենագրական հրատարակութեանց անունները: Ամէն գիրք ներշնչումի մը ցայտաւն է, կոշումի մը ծնունդը, կամ առեւտրական հաշուի մը արտադրութիւնը. յաջողութիւն գտնողը ժողովրդին մտաւոր հակումին կնիքը կը կրէ: Հայ մասնաւորապէս մը մէջ չեմ որպէս զի մանրախոյզ ըննութեամբ կարենամ կատարելագոյն գիտակցօրէն խօսիլ, սակայն յիշողութեանս թելադրած անուններէն մէկ բանին կը լուսարանն իս:

Երկու երեք կիսիատար թարգմանութիւններէ ետքը «Թափառական Հրեան» ամբողջապէս հրատարակուեցաւ առաջին սպաղրութեամբ, որուն երկրորդ մըն ալ յաջորդեց. Հիւլիոյի «Թշուառները» նախ Իզմիրէն ունեցանք, յետոյ Պոլսէն. վենետիկէն Ալիշանի «Հայրենի»-ն կրկին սպաղրեցաւ. Ռուսիոյ Հայերը ունեցան Րաֆֆին, մեր մէջ ալ շատ տարածուած: Հոգեկան ու մտաւորական տենչանքներու պատկերագրերը չեն ներկայացներ առ զրքերը: Կեղծ կրօնասիրութեան գէժ ապագայ «Թափառական Հրեան». ընկերական յեղաշըջումի կարմիր դրօշակ «Թշուառները». հայրենասիրութեան բամբիւն «Հայրենի». Յեղափոխութեան փողակ «Րաֆֆին»:

Սակայն հայ մաքին ընթացքը իմաստասիրելու ուզողներուն այդ զրքերը թերեւս այնքան ապահով առաջնորդներ չըլլան որքան այն միւս գիրքը որուն գեղարուեստական գրութիւնը սպաղրութիւնը կովկասի Հայերուն

պարտական է մեր զրականութիւնը: Անոր առջեւ — գոնէ անգլին՝ Արարատի բոլորտիքն ու շրջականները — կ'անհետանան զրական դարձները, դադար կ'առնան գաղափարի մարտնչութիւնները, կը հանդարտին կուսակցական սլոյքարները: Այդ զրքին մէջ կը ցոլանայ կովկասեան Հայութեան միաքը, այդ զրքին մէջ կը բարբախտ կովկասեան Հայութեան սիրտը. — ԵՐԱՂԱՅԱՆՆԷ Է ատիկա:

Այս կարծիքներու վաւերացումը կը ներկայացնեմ ահա «Մշակ»-ի մէջ հրատարակուած ազգարարութեան մը.

«Տեսնելով որ մեր առաջի սպաղրած ԵՓԻՄԵՐՏԷ-ԵՐԱՂԱՅԻՐՔԸ

սպաղրած է, եւ ամէն կողմից պահանջ ու կարօտութիւն է զգացվում, այս տարվայ յունվարից պարտաւորվեցի գիրքը երկրորդ անգամ յանձնել սպաղրութեան: «Եփիմերտէ-Երազագիրք»ը Հայի անբաժան ընկերը լինելով կատարում է նրա համար «ոսկի բարեկամի» պաշտօն. այս պատճառով սկսեցի բաղմասեակ եւ բաղմաս կողմանի եւ միանգամայն կեանքի ամենահարկաւոր եւ օգտաբեր գոհարներով եւ մանաւանդ «առողջապահական եւ բժշկական» ճոխ նիւթերով հարստացնել եւ բոլորի համար յերաւի «ոսկի բարեկամ եւ ոսկի ընկեր» դարձնել. եւ այսպէս կրկնակի օգտաւէտութեամբ մատչելի անել բոլորին: Գիրքը իր ստուարութեամբն առաջի սպաղրութեան եռապատիկն է, մի օրինակի գինը 2 բուբլի 70 կոպէկ է: Սրանով յայտնում եմ բոլորին՝ մանաւանդ մեծ. նամակագիր այն պարոններին, որոնցից շատերը հասով եւ շատերը դաւարով նախապէս ցանկութիւն են յայտնել գնելու, թո՛ղ բարեհաճին գնելը կանխիկ ուղարկել եւ գրքերը պօստով ստանալ: Ապառիկ՝ ո՛չ հատով եւ ո՛չ գումարով ոչ ոքի չի ուղարկվի:»

Գրիգոր Բահանայ Մանդակունի

Պոլսի կովկասցի բարեկամ մը ունէի, երբեմն իրիկունները մէկտեղ մեզի կ'երթային: Տուն մանեղնուս՝ «խաթուն մարիկ, բարեւ ըեզ»էն ետքը Երազահանը կը խնդրէ: Հօրս մեծ-հօրմէն ժառանգութիւն մը, Ապուշիւն Օրթագեղ բերուած հայրենի թերափ, փառքերու սնուցիչութեան տիրազգեցիկ կենդանի վկայութիւնն էր այդ լքուած գիրքը ինձի համար: Ո՛ր հանճար, կրօնքի ո՛ր հիշատակը Երազահանի մը միհահեծան տիրապետութեամբը իր իշխանութեանը սակ պահած էր մեր հայրերուն ամբողջ էութիւնը: Ինքն էր, Երազահանը, ամէն առտու կեանքը սրտում կամ սրտի ընծայող: Իրմէն՝ սրտերու արեւը, իրմէն՝ հոգիներու մայրը. իրմէն՝ օրուան թեթեւութիւնը, իրմէն՝ օրուան գողը. իրմէն՝ զգուշաւորութեան ազգարարութիւն, իրմէն՝ համբերութեան պատուիրանը: «Օրն բարի է, երազն է բարին կատարեցի. օրն չար է, երազն է չարն ելցէ: Երազն յերիս աւուրս կատարեցի:» Գողգոհար իրեն ակնկառոյց կը մնար Հայը դաւի մը աշխարհ գալուն օրերը. ո՛ր աստեղատան սակ պիտի ծնի սղան, «բարե՛յ թէ չարի»: Ուղեւորութիւններու անցապիւրը շը-

նորհոյն ալ ինք, մերժողն ալ ինք, « օրն չպր է, ճանապարհ մի անկանիլ: » Խեղճ Երազահան, հիմա բրածոյ շիջափառ:

Երբ կոլիասցի բարեկամս կը լափեր սե կողքով այդ գիրքը քանակ մը սփոփանք կը զգայի: Ընտանիքի մաս կը կազմէր ձերանի Երազահանը. մեղք էր թո՛ղ անոր ալ բիշ մը պատիւ ընծայուէր: Բայց կը մտածէի նաև թէ աղջային արինի ի՛նչ կենսունակ ժառանգութիւն կայ մեր մէջ սրով 19րդ դարուն եւրոպական մայրաքաղաքը կըրթուած Հայը կեանքի ուղղութիւնը Երազահանէն կը խնդրէր պնդակ, կնչակս 18րդ դարուն Հայաստանի լեռները ապրող Հայը: Եւ սակայն տարակոյս մը կը պատեր միաքս. արդեօք բացահուծիւնը մե՞նք էինք, Երազահանը չյարգողներս, թէ այդ երեսասարդը: Ու հիմա Մանգակունի քահանային ծանուցումը կարգալով ինծի անանկ կիւլայ թէ սե կողքով հաստարեստ Երազահանը լեզու ելած Պոլսէն կը ձայնէ ինծի. « Դուք ապաստեալ Հայեր էք. ճշմարիտ Հայութիւնը իմ տիրապետութեանս տակն է միշտ. անմահը ես եմ, մահկանացուն դուք էք: Ձեր նախահայրերը կը դողային ինէ, անոնց նախահայրերուն նախահայրերն ալ: Իրարու յաջորդող սերունդներն ալ պատկառ պիտի մնան իմ առջեւ. ես Խորհրդաւորն եմ: »

Տէր Մանգակունիի ազգարարութիւնը, « կարճ բայց պերճախօս » կրնայ արգարաջնել Երազահանին այս յաւանութիւնը: Ու արդեօք երբ, օրինակ, « Մշակ » 23 ապրիլի գոյութենէն յետոյ գեղարարատուութեամբ է խընդրել բաժանորդներէն փութալ եւ ապաստիկները վճարել, Երազագրքին հրատարակիչը վսեմ հպարտութեամբ իմաց կուտայ թէ ոչ սքին վարկ կը բանայ: Գրական ո՞ր տաղանդ այսքան յանդուրդն ներկայացած է հաստարարութեանս առջեւ: Բայց տէր հայրը զիտէ թէ ուրքը ամուր կուտանի վրայ է: Ու զրբին զինն ալ 2 բուպի 70 կուպէկս այսինքն 7 ֆրանք, Եւրոպայի մէջ սուղ զրբերուն զինը. ինչ որ ենթադրել կուտայ թէ ընթերցողներու մեծամասնութիւնը « սլակառեի » զասակար ի մը կը պատկանի խեղճ կինտօն այդքան ստակ չի կրնար տալ: Ու նամակագիրներուն աքուած ածականն ալ մեր այս ենթադրութիւնը կրնայ հաստատել, « մեծ նամակագիրներին », առ « մեծ » ըլլայինքն « Մեծապատիւ » Պոլսոյ մեր « Ազնուաշուք » ին համապատասխանողի պէս բան մըն է, անկեց ալ բիշ մը վեր, վստն զի բացատրիկ տիպոս մըն է:

Երազահանի այս ազգարարութիւնը կարգալէն բիշ հարը « Մշակ » ին մէջ աչքիս վարկաւ դանդախներ՝ Թիւրքիոյ Հայոց կողմէ կոլիասի մտաւոր զարդացումին նկատմամբ յայտնուած աննպատակ արժեքներու առթիւ: Սակայն չե՛նք կրնար արգեօք իրենց ներողամտութիւնը խնդրել խեղճ « հոգեպաններու » համար որ կը մուրթին իրենց պոլսական թեթեւամտութեամբը, երբայչքերնուն կը զնընէ, ու ան ալ « զրական » « զարդացած » « համալսարանական » կոլիասի օրագրութեան մէջ « Երազահանը Հայուն անբաժան սկի ընկերը: »

Կոլիասեան Հայոց նկատմամբ մեր մուրումը պէտք է ասանկ ցաւալի թիւրիմացութիւններու վերադրել, եւ ոչ թէ մեզի ընծայուած « հոսհոս » մակդիրին վրէժնորական զգացումի մը ինչպէս « Մշակ » ի մէջ սխալմամբ ենթադրուած է. « Ռուսահայերը մի անգամ « հոսհոս » են անուանել Պոլսեցիներին, եւ ահա այդ վիրաւորանքը չէ մոռացվում: »

Ս՛հ, չէ, բաւական սրամիտ ենք մյ՛յ ածականէն չը ցաւելու համար: Մեր բարկութիւնը այս պարագային մէջ ոչ միայն տխմարութեան անժխտելի ապացոյցը պիտի ըլլար այլեւ « հոսհոս » տիպոսին անարժան պիտի ընծայէր մեզի: Ընդհակառակը կը ժպտինք ու կը խնդանք: Ան ի՛նչ սիրուն յատկանշանական որակիչ մըն է որ ըստեղծած են մեզի համար: « Հոսհոս », թեթեւալաց, բողբոջահայ, նրբին ածական, որ կարծես աչքիդ առջեւ կը բերէ կը պատկերացնէ ջինջ սրտի մը, օղաչու հպիի մը, վերացեալ մտքի մը մարմնացումը, Պոլսոյ երկնքին պէս կապուտակ, Պոլսոյ զեփիւտին պէս թռչուն, Պոլսոյ օդին պէս փոփոխական, առտուն որ զրբը ես իրիկունը զարեթէ կրնաս:

Ամբողջ մասնագրութիւն մը կ'արժէ մինակ այդ « հոսհոս » ին զիւտը: Ո՞ր հեգնամիտ կոլիասցիին բերնէն նախ դուրս ցատքեց այդ պատկեր-ածականը սրուն դազափարը մտքերու մէջ հասունցած՝ կը սպասէր իրեն մարմին տուող արարչի մը: Ո՛չ ոք կոլիաս մտահոգութիւն սնեցած է « հոսհոս » ի հեղինակը փնտռել եւ մեզի ծանօթացնել: Մոռացում. ի՛նչքան մեծ հնարիչներու բազմն է աս. ցորենը ո՞վ զտաւ, եւ աղը ո՞վ:

Բայց եթէ « հոսհոս » բառին հնարիչը անծանօթ կը մնայ, սակայն աւանդութիւնը մեզի կը պահէ իսկական մը-տատիպար գէժքը սրուն ի տես կոլիասեան կուրծքէն « հոսհոս » ըլլալու ցատքեց, անդիմադրելի իբր ուժէ մը մղուած:

Այդ վեճը Մարկոս Աղաբէկեանն է եղած: Մաս թէս կաթողիկոսին հետ կոլիաս կը գացած 1833 թին: Շատ անգամ Թիֆլիզ կ'ատենաբանէր: Իզմիրի ու Պոլսոյ յունական կլիմաներու զաւակ, այդ հեղին-Հայը իր ցատկոտ, սրտաբուլի, պերճաբարբառ լեզուին մէջ զրգող, հմայող շեշտ մը ունէր որ կը մուգէր, կը զեւթէր, կը խանդալառըր զեռ տակաւին հաստիկ, մեծափոր, թանձր օվիլ կոլիասցիները: Շուարած կը մնային այդ նորատեսիլ երեւոյթին հանդէպ. ու կը սիրէին աշխարհական բարոյիչը: Իր ատենաբանութիւններուն մէջ Աղաբէկեան բազմաթուութիւններ ընելով Ռուսիոյ եւ Թիւրքիոյ Հայոց միջեւ կ'ըսէր շատ անգամ. « Դուք հո՛ս, նրանք հո՛ն: Հո՛ս այսպէս, հո՛ն այնպէս: Հո՛ս, հո՛ս... » Եւ ահա օր մը մէկը փոխանակ « Պարոն Մարկոս Աղաբէկեանցին զնանք » ըսելու, կ'ըսէ. « Արի՛, զնանք հո՛ս, հո՛ս » ին: Այդ օրը ըստեղծուեցաւ « հոսհոս » ածականը, որ ետքէն մասնաւորէն ընդհանուրին տարածուեցաւ, ինչպէս կ'ըսեն տրամաբանութեան զրբերուն մէջ:

\* \* \* \* \*



ներուն փճացումը պիտի տեսնէր: Օր մը փերուշան Նշա- նը կերպարանափոխ եղած էր. ժամը կը հնչէր. ուսա- կան բանակները յաղթական կը յառաջանային: Ա՛լ հիմա ձերունի վարժապետին գէժքը աննդոտ ոգեւորութեամբ մը կը լուսափայլէր կարծես. կը պտըտէր տուները, կ'այցեցէր Հայոց խանութները, ու մեծ աւետիսը կուտար. ահա՛ Մարգարէութիւնը կ'իրականանար: Ու կ'երգէր այդ մար- գարէութիւնը, արեւելեան տիրանուազ խորհրդաւոր եղա- նակով մը որ իր բերնին մէջ, — ու մեր ալ ականջներուն մէջ, Մարտէյեէզի մը թրթուռներովը կը հնչէր կարծես.

Ի լըրանալ թըւոյ խաչին  
Մահմէտականքըն կորնչին:

Եկած լրացած էր այդ թիւը. կը հաստատէր հաշիւներով որոնք «Վեցհազարեակ» խորհրդաւորութիւնը ունէին: Ու բիշ մը թերեհաւատներուն, մատովը Սան-Սթէֆա- նոյի ճամբան ցոյց կուտար:

Երբեմն երբեմն աչքիս առջև կը բերեմ այդ դառնա- ցած մութ դէմքը որուն վրայ հաւատքը մութ ճառագայթ մը կը սփռէր: Ամբողջ Հայութեան պատկերը չէ՞ր այդ ծեր վարժապետը: Հայրիկ, Ներսէս, Օտեան, Փափազեան, ամէնքն ալ, ամէնքն ալ, Սան-Սթէֆանո, Պերլին, Լոն- տոն, ակնկառոց հոսհոսներ չէ՞նք, ամէնքն ալ «փերու- շան նշաններ»:

Եւ սակայն փերուշան թէ խորհրդանշան այդ Հայը:

ՀՐԱԶԴԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

#### ԱՆԳՒԼԻԱՅԻ ԿԱՆՍՆՅ ԳՈՐԾԸ

Կարելի չէ չհիանալ այն բանիմաց ու օգտաւէտ գոր- ծունէութեան վրայ որ Անգլիոյ կանանց Հայկական Նը- պաստամատոյց Յանձնաժողովին («Հայաստանի բարե- կամներ») ու ընկերութիւն) բաժինն է Հայաստանի ու Կի- լիկիոյ մէջ: Կիներ են որ Անգլիայէն, գործի մարդերու որանչելի մէթոտով մը, ընդարձակ ձեռնարկութիւն մը կը վարեն հայկական հեռաւոր կեդրոններուն մէջ, ու իրենց սկսած գործը կը քալէ կանոնաւոր եւ իրական արդիւնք- ներով, — մինչդեռ անգին, օրինակի համար, ամբողջ Պարսոյ Հայութիւնը՝ Պատրիարքարանով ու վարչութեամբ՝ բթին տակը գտնուած հիւանդանոց մը վարելու ապիկար ձեղերուն մէջ կը տապալակի ընդունայն:

«Հայաստանի Բարեկամ» տիկնանց ընկերութիւնը Անգլիոյ մէջ հաւաքած զրամը կը զրկէ միտինարներու ձեռքով Հայաստան ու Կիլիկիա հաստատուած որբանոց- ներու: Բայց այս բարեգործական միջնորդի զերը իրենց գործունէութեան եռանդին չի բաւեր: Ասոր հետ միանգա- մայն, ուրիշ գործ մը սկսած են, այլապէս օգտակար ու տեսական, — այն է արհեստանոցներ բանալով՝ աշխատ- ցնել կիները ու որբերը, արհեստներ սորվեցնել որբե-

րուն, եւ անոնց աշխատութեան արդիւնք եղող ձեռագործ- ները Անգլիոյ մէջ վաճառելով՝ արդիւնքը նորէն զրկել Հայաստան ու Կիլիկիա՝ ոյժ տալու արդէն հիմնուած հաստատութեանց եւ նորեր ստեղծելու:

Անոնք, օրինակի համար, Տիարպէքիւրի մէջ այս կանանց ձեռնարկը: Այնտեղի որբանոցին մանչերուն որոշուած է սորվեցնել երեք արհեստ, կահագործու- թիւն, կօշկակարութիւն եւ դերձակութիւն, եւ աղջիկնե- րուն՝ արեւելեան «խավու» հիւսել: Իրենց միակ նպա- տակն է մուրացկանութիւնէ ազատել այդ բոլոր խեղճերը, զանոնք բիշ ասենէն իրենց ապրուստը շահելու վիճակին մէջ գնելով:

Կիներուն եւ որբերուն հիւսած ձեռագործները Անգ- լիոյ մէջ մեծ ընդունելութիւն կը գտնեն: Մի միայն Կլաս- կօի մէջ, անցեալ տարի, 1,500 անգլ. ոսկիի հայկական ձեռագործ ծախուած է: Հայ արհեստաւորներու հիւսած մեծ զրան-վարագոյր մը հանգանակութեամբ գնուած ու նուիրուած է Կլասկօի Արհեստապետութեան Թանգարա- նին, ուր կը գտնուի հիմա իբր նմոյշ մը հայկական ա- սեղնագործութեան: — Տիկնանց ընկերութիւնը հիմակ պատրաստ ունի ամէն կարգի հայկական ձեռագործ, կա- պերա, ծածկոց, անձեռոց, բարձ, վարագոյր, հողաթափ, եւայլն, ու զանոնք ի վաճառ հանած է:

Ընկերութեան օգոստոսի տեղեկագրէն կը տեղեկա- նանք որ իր գործունէութիւնը աւարձած է այժմ նաեւ Գրի, Չմշկածագ ու Բալու: Այնթապ ու Մարուսան ի- րենքղիւրենք ազատած են, բայց ատոնց զիւզերուն մէջ թշուառութիւնը մեծ է գեռ: Արապկիր վերաշինուած է: Մարաշ ու Զէյթուն միշտ կարօտ են: Ընկերութիւնը կ'աշխատի նաեւ Ատանա, Ուրֆա, Տիարպէքիւր, Վան, Խարբերդ:

### ՀԱՅԱՍՏԱՆ 14<sup>րդ</sup> ԴԱՐՈՒՆ

Բրիտանական Թանգարանին մէջ հետազօտութեան մը պահուն, այս օրերս պատեհութիւն ունեցայ հանդի- պելու գրքի մը ուր անգլիացի Սըր Ճոն Մոնտէվիլ ասպե- տը իր բազմաթիւ ուղեւորութեանց նկարագրութեանը քով՝ մէկ քանի էջ կը նուիրէ նաեւ Հայաստանի:

Եթէ չեմ սխալիր, ի բաց առեալ հին հեղինակները՝ Հայաստանի մասին խօսող հնագոյն մատենագիրն է աս: Ի՞նչն է Սինգ Ալպանս (Անգլիա) 14րդ դարուն սկիզբը, եւ ճամբորդութեան սկսած 1322ին, Ս. Միքայէլի տօ- նին օրը: Երսունըջորս տարի շարունակ ճամբորդած է Ա- րեւելք: Բիւզանդեան կայսրութիւնը կանգուն էր զեռ ան ատեն, թէպէտ արդէն շատ սկարացած թիւրքերուն նո- րածագ եւ յառաջխաղաց իշխանութենէն: Թիւրքերը գրա- ւած էին Հայաստանը եւ Փոքր-Ասիոյ մեծագոյն մասը: Եղիպտոսի սուլթանները տէր էին Երուսաղէմի, Պաղես- տինի եւ Սիւրիոյ: Կիլիկիոյ մէջ հայկական իշխանութիւ- նը շիջելափառ կը մարէր:

Սըր Ճոն Մոնտելլի ֆրանսերէն գրած է նախ իր գիրքը, ու անկից թարգմանած լատիներէնի ու անգլիերէնի: Պէտք է գիտնալ որ, այդ թուականին, լատիներէնը, ֆրանսերէնը ու անգլիերէնը՝ երեք գրաւոր լեզուներն էին Անգլիոյ մէջ: Լատիներէնը ան ատեն և զեռ անկից ետքն ալ երկար ատեն ուսեալ գաստակարգին հասարակաց լեզուն էր, կերպով մը՝ Գպրութեանց Եւրոպական Հանրագեանութեան պաշտօնական լեզուն. ֆրանսերէնը անգլիական արքունիքին լեզուն էր, ու անգլիերէնը՝ ժողովրդին:

Սըր Ճոն Մոնտելլի ուղեւորութեանց գիրքը իր ժամանակին մեծ հոշակ ունեցած է: Ոչ մէկ գրքի, ի բաց առեալ Ս. Գիրքը, նայնչափ պրշագիրը կը գտնուի, կ'ըսէ Պ. Հոլլիուէլ, Ահրզ պարուն վերջերը եւ Աճրզ սկիզբները: Գիրքը մասնաւորապէս ծրարուած է իբր առաջնորդ մը Երուսաղէմի ուխտաւորներուն, ու ասիկա կը բաւարար Միջին պարուն՝ ամէնուն շահեկան ընծայելու զայն: Բայց կը խօսի նաեւ ամբողջ Արեւելքի աշխարհագրութեանը մասին, Բիւզանդական Կայսրութեանէն մինչեւ Հնդկաստան ու Չինաստան, յիշելով իր այցելած երկիրներուն պատմութիւնը եւ նկարագրելով տեսարաններն ու բարքերը, ու տեսած հրաշալիքները:

Դժբաղդութիւն մըն է որ Սըր Ճոն Մոնտելլի շատ սակաւախօս է Հայաստանի մասին, ուսկից անցած կը թուի՝ զէպի Պարսկաստան եւ Հնդկաստան երթալու համար: Երուսաղէմի մանրամասն նկարագրութեանը մէջ ալ, թէպէտ կը խօսի հոն հաստատուած արեւելցի բրիտանեաներուն՝ Յոյներուն, Յակոբիկեաններուն, Ասորիներուն, Վրացիներուն, Նեստորականներուն մասին, Հայոց յիշատակութիւնը չընէր սակայն: Հայաստանի նուիրած մէկ քանի էջն ալ պատմական արժէք մը չունին եւ ո եւ է լոյս մը չեն սփռեր Ահրզ պարուն մէջտեղուանը այն կողմերը Բիրոզ կացութեան վրայ: Եւ սակայն շահեկանութեանը զօրի չէ կարգալ այդ մէկ քանի էջը, որոնք, որչափ գիտեմ, հայ բանասիրութեան անձանոթ մնացած են ցարդ:

Լ. Զ.

Տրապիզոնէն կ'երթցուի Փոքր Հայք (Հայաստան), ուր ժայռի մը վրայ հին զրեակ մը կը գտնուի՝ Բազէի զրեակ անունով: Այս զրեակը կառուցուած է Լայաս (Լայասո) քաղքէն անդին, Փարսիայի քաղքին քով՝ որ հարուտ տանուտիրոջ մը ու բարի բրիտանէի մը՝ Գրուքի սեփականութիւնն է: Հոն բազէ մը կը կենայ գեղեցիկ թափ մը վրայ, ու զիւթական յաւերժահարս մը կը սրահպանէ զանի. ու ով որ եօթը օր ու եօթը զիշեր, կամ, ինչպէս ոմանք կ'ըսեն, երեք օր երեք զիշեր, այդ բազէին նայի մէն միայնակ եւ առանց քնանալու, յաւերժահարսը կը կատարէ ինչ որ ան բազէայ երկրային բաներէն. ու ասիկա շատ անգամ ապացուցուած է: Ու անգամ մը Հայաստանի թագաւոր մը, որ արժանաւոր ասպետ մը ու արի մարդ մը ու ազնիւ իշխան մըն էր, ատեն մը այդ բազէին նայեցաւ. և եօթն օրը ու եօթը զիշերը լմնալէն ետքը, յաւերժահարսը իրեն եկաւ, եւ ըսաւ որ յայտնէ իր բազէանքը, որովհետեւ արժանացած էր ատոր. ու թագաւորը

պատասխանեց թէ ինք պէտք եղածին չափ մեծ իշխան մըն էր, ու զոհ իր վիճակէն, ու պէտք եղածին չափ աշխարհային բարիք ունէր. ուստի ուրիշ բանի չէր բազէար բայց այդ բազէին մարմինն: Ու բազէիչը պատասխանեց թէ չէր հասկնար թէ ինչ կ'ուզէր իշխանը, ու ըսաւ թէ յիմար մըն էր որ չկարենալ սնենալիքը կը ցանկար, սրով հետեւ ինք (բազէիչը) ըսած էր որ երկրաւոր բան մը խնդրելու էր, ու ինք երկրաւոր բան մը չէր, այլ հողեւոր բան մը: Ու թագաւորը ըսաւ որ ինք ուրիշ բան չի պիտի խնդրէր: Ու բազէիչը պատասխանեց. «Որովհետեւ չեմ կրնար հրաժարիլ տալ ձեզ ձեր յայրատ յանգնութեանէն, ձեզի եւ ձեր սերունդին պիտի տամ՝ առանց ձեր բաղձաւուն: Տէր թագաւոր, զուք պատերազմ պիտի ունենաք առանց խաղաղութեան, եւ միշտ, մինչեւ իններորդ սորտը, ձեր թշնամիներուն սարուկը պիտի ըլլաք, ու կարօտ պիտի մնաք ամէն բարիքի:» Ու ասկից ի վեր ո'չ Հայաստանի թագաւորը եւ ո'չ երկիրը երբեք խաղաղութիւն կամ բարօրութիւն տեսած են. ու ասկից ի վեր միշտ Սարակիստաններուն հարկատու եղած են:

Եւ ուրիշ անգամ մը աղքատ մարդու մը որդին բազէին հսկեց, ու բազէաց որ լաւ յաշողութիւն ունենայ ու առուտուրի մէջ բազէաւոր ըլլայ: Ու բազէիչը շնորհեց ասիկա, ու ան ամէնէն հարուտ ու ամէնէն անուանի վաճառականը եղաւ որ կրնայ ըլլալ ծովու կամ ցամաքի վրայ. ու այնչափ հարստացաւ որ ունեցածին մէկ հազարերորդը չէր զիտեր. ու ան աւելի իւստտուն էր իր բազէանքին մէջ քան թագաւորը:

Նոյնպէս Տաճարական ասպետ մը հսկեց հոն, և միշտ սակիով լեցուն քսակ մը խնդրեց. ու բազէիչը շնորհեց ասիկա, բայց ըսաւ որ ատով միաբանութեան ոչնչացումը խնդրած էր, քանի որ խնդիր պիտի ծագէր թէ քսակը ուրուն քով պիտի մնար, ու նաեւ պիտի դուռզանային այդ քսակը ունենալուն պատճառաւ. ու այդպէս ալ եղաւ:

Ու զիտնալու է որ հսկողը եթէ քնանայ, կորսուած է, ա'լ անգամ մըն ալ մարդ չի տեսներ զանի: Ասկից առաջ յիշած տեղուանքս երթալու ուղղակի ճամբան աս չէ. այս ճամբան վերոյիշեալ հրաշքը տեսնելու համար է: Ուստի, ով որ ուղղակի ճամբուն հետեւիլ կ'ուզէ, Տրապիզոնէն երթալու է զէպի Մեծ Հայք, Արտիբուն (Էրզրում) անուն մեծ քաղաք մը որ առաջ լաւ ու բազմամարդ քաղաք մըն էր, բայց Թիւրքերը մեծ մասամբ քանդած են զայն: Այդ տեղուանքը որթ կամ պտուղ չի բուսնիր, կամ շատ քիչ: Այստեղ երկիրը ամէն տեղէ աւելի բարձր է. ու ասոր համար շատ ցուրտ է: Ու բազմաթիւ ջրեր ու լաւ աղբիւրներ կան որոնք հողին տակէն կուգան Գրախտին գետէն որ Եփրատ կը կոչուի և որ այս քաղաքէն ժամ մը հեռու է: Ու այդ գետը զէպի Հնդկաստան կ'երթայ հողին տակէն, ու նորէն երեւան կուգայ Արբաղար երկրին մէջ: Ու այսպէս մարդիկ այս Հայաստանէն կ'անցնին, ու Պարսից ծովը կը մտնեն:

Այդ Էրզրում քաղքէն կ'երթցուի Սապիտոքոյ անուն լեռը. եւ ասոր ալ քով Արարատ կոչուած լեռ մը կայ, զոր Հրեաները Թանիզ կ'անուանեն, ուր Նոյն տապանը հանգչեցաւ եւ տակաւին կը մնայ լեռանը վրայ. ու պայծառ օգով, հեռուէն կարելի է տեսնել զայն: Այդ լեռը եօթը մըն բարձրութիւն ունի. ու կան մարդիկ որ կ'ըսեն թէ տեսած ու շօշափած են տապանը, ու մատերնին գրած

են այն մասերուն վրայ ուսկից սատանան գուրս ելաւ, երբոր Նոյ «Օրհնեցէր» ըսաւ: Բայց այսպէս ըսողները ազիտաբար կը խօսին, որովհետեւ ոչ ոք կրնայ լերան վրայ բարձրանալ՝ ձմեռ ու ամառ հոն տիրող ձիւնի առատութեան պատճառաւ, այնպէս որ Նոյն ի վեր ոչ ոք կրցած է հոն բարձրանալ, բացի վանականէ մը որ, շնորհիւն Աստուծոյ, զնաց վար բերաւ տապանին տախտակներէն մին որ մինչեւ հիմա կեցած է լերան ստորոտի վանքին մէջ:

Ու ասոր մօտ կը գտնուի Տայն (Դուին՝) քաղաքը, զոր Նոյ հիմնեց, ու ասոր ալ մօտ՝ Անի քաղաքը, ուր հազար ու մէկ եկեղեցի կը գտնուէր: Այդ վանականը մեծ փափաք ունէր լեռը ելլելու. ու օր մըն ալ ճամբայ ելաւ գէպի վեր. ու երբ լերան մէկ երրորդը ելած էր՝ այնչափ յոգնած էր որ ինկաւ քնացաւ. երբոր արթնցաւ, ինքզինքը լերան ստորոտը պակոված գտաւ: Ան ատեն շերմեռանգորէն աղօթեց առ Աստուած որ իրեն թող տայ լեռը ելլել. ու հրեշտակ մը եկաւ իրեն, ու ըսաւ որ լեռը պիտի բարձրանայ. ու այնպէս ալ ըրաւ: Ու ասկից ի վեր ոչ ոք լեռը ելած է. հետեւաբար այդ տեսակ խօսքերու հաւատալու չէ:

Այդ լեռնէն կ'երթանք Դուրէժ քաղաքը, որ առաջ Տարսիս կը կոչուէր, շատ գեղեցիկ ու մեծ քաղաք մը, աշխարհքի էն վաճառաշահ քաղաքներէն մին. ու ասիկա Պարսկաստանի կայսեր հողին վրայ կը գտնուի: Ու կ'ըսեն թէ կայսրը այդ քաղաքին մէջ ապրանքներու մաքսէն շատ աւելի հասոյթ կ'ունենայ քան ամէնէն հարուստ քրիստոնէայ թաղաւորը՝ իր ամբողջ թաղաւորութենէն, որովհետեւ իր վաճառականներուն վճարած տուրքը և մաքսը այնքան մեծ է որ հաշուել կարելի չէ: Այդ քաղաքին քով ալի բլուր մը կայ, ուսկից ամէն մարդ ուզածին չափ կ'անէ: Շատ քրիստոնէաներ կը բնակին այստեղ, Սարակիստներուն հարկատու:

ՍԸՐ ՃՈՆ ՄՈՆՏԷՎԻԼ

ՕՐՈՒԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Քաղաքականութեան առած յաջորդական կերպարանափոխութիւնները ոչ մէկ ատեն, կարելի է ըսել, այսքան շնչասպառ պահած էին զիտողները և հետաքրքրուողները: Ռուսիոյ կայսեր զէնընկեցութեան հրաւրը մէկէն ի մէկ մարդկութիւնը ցնցելէ յետոյ, ա՛լ օրուան մտահոգութեանց մէջ տեղ չունի: Դիւանագիտութեան ներքին և արտաքին և ականջէ հեռու շրջաններուն մէջ կը ծեծուի միայն, սպասելով զեպանախորհուրդին որ յառաջիկայ տարուան սկիզբը պիտի գումարուի՝ խորհրդակցելու համար ձարին առաջարկին վրայ:

Եւրոպական մամուլը շարժած մը ամբողջ զբաղեցաւ յետոյ Անգլիոյ և Գերմանիոյ միջև համաձայնութեան մը լուրովը: Գերմանիա պիտի զիւրացնէր Անգլիոյ նոր երկրակալութիւնները Հարաւային Ափրիկէի մէջ, մասնաւորապէս ստացումը Բորգոսկալի սեփական Տէլաիօս ծովածոցին, որ Ափրիկէի արեւելեան ծովեզերքին վրայ զբաղաւոր բնական նաւահանգիստն է որուն այնքան պէտք

ունի Անգլիա: Ի փոխարէն Անգլիա ազատ ստպարէզ պիտի թողար Գերմանիոյ՝ Թիւրքիոյ մէջ, և Անգլիա անշուշտ շատ վարպետ հաշիւ մը կ'ընէր ատով, Գերմանիան Ռուսիոյ դէմ հանելով Արեւելքի մէջ, Գերմանիոյ ձեռքով ապագային արդիւնելով Ռուսիոյ յառաջխաղացումը գէպի Միջերկրական:

Թէ այս համաձայնութեան լուրը ո՛րքան ճշմարիտ է՝ գէպքերուն թողով ապացուցանել, այսօր բոլոր աչքերը յառած են կրետէի վրայ:

Հանեայի մէջ իսլամները նորէն քրիստոնէի արին թափեցին, ոչ թէ խեղճ յոյն կղզեցիներուն, հապա թագուհիին զինուորներուն — 10 մեռած և 40 վիրաւոր:

Ասիկա պիտի բաւէ՞ վերջապէս վախճան մը գնելու այն անորոշ ու ողբալի կացութեան որ ահա տարիէն աւելի է կը տիրէ կրետէ և որ եւրոպական պիւնանագիտութեան փառքը մեծագոյն տիտղոսը չի պիտի կազմէ սպահովարար՝ այս դարավերջին մէջ: Անգլիացիները երկու անգամ ուժակոծեցին Հանեան, ու սեպտեմբեր 13ի առտուն վերջնազիր մը զրկեցին կրետէի թիւրք կառավարչին՝ 48 ժամ պայմանաժամ տալով բոլոր թիւրք զինուորները (4,600 հոգի) զէնընկեց ընելու: Զինուորները յետոյ նաև պիտի դուրսն և թիւրքիա զրկուին, — ու ասիկա օսմանեան դարաւոր անբարեկարգութեան վախճանը պիտի ըլլայ այդ գոթազգ կղզիին մէջ:

Վերջնագիր մը, ու անգլիական վերջնազիր մը, շատ ծանրակշիռ բան մըն է: Այս առաւօտ է որ կը լրանայ պայմանաժամը, ու եթէ, Կ. Պոլսէն եկած հրամաններուն վրայ, կրետէի կառավարիչը մերժէ Անգլիոյ պահանջը, ա՛լ անգլիական թնդանօթներն են որ պիտի սկսին զործի:

Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ Սուլթանը բնաւ արամազիր չէ հրաժարելու կրետէի վրայ ունեցած իրաւունքէն: Միւս կողմէ, Ռուսիա, շրջաբերական մը զրկելով բոլոր պետութեանց, կը խնդրէ չորս պետութեանց կողմէ (յայտնի է որ Գերմանիա և Աւստրիա քաջուած են) միացեալ կորովի ձեռնարկ մը: Բայց, ա՛լ ակնհերեւ է որ պետութիւններու միացումը, վեցով թէ չորսով, պարզապէս իրար չէզոքացնող ուժ մըն է, ու այս անգամ վերջապէս՝ Անգլիա արամազիր չերեւնար ուրիշներուն հաւանութեանը սպասելու:

Անգլիական թերթերը, որոնք հիանալի կարգապահութեամբ մը, ամբողջ շարժած մը ձայն չհանեցին՝ սպասելով կառավարութեան բռնելիք ուղղութեանը, հիմակ բարձրաձայն կը պահանջեն ո՛չ միայն թիւրք զինուորներուն վտարումը, անգլիացի զինուորները սպաննող իսլամ խուժանին պարագլուխներուն խիստ պատժումը և ուժեղ իշխանութեան մը հաստատումը կրետէի մէջ, հապա նաև թիւրքիոյ կողմէն բարոյական և նիւթական հատուցում առ Անգլիա, որովհետեւ հաստատուած է թէ թիւրք զինուորներն ալ կրակ ըրած են Անգլիացիներուն վրայ: «Ուշ կամ կանուխ, Սուլթանը պէտք է ներում խնդրէ Անգլիայէն՝ Թագուհիին զինուորներուն սպանութեանը համար:»

Ընդհուպ պիտի հասկնանք թէ ի՞նչքան հիմնական այս սպանալիքները, որոնց գոթազգաբար շատ վարկեցուցաւ սուլթանը:

### ՀԵՐՔՈՒՄԻ ՄԸ ԱՌԹԻՒ

«Արմէնի» փրանսերէն թերթը յանձնարարապէս պաշտօնական թղթակցութիւն մը, որ կը նկրաւ հերքել պատմական ծանօթագրութիւններու այն կէտը թէ Տասեան Արթին փաշա 1890ին ետ առնել տուաւ Աշքեհանի խորէն պատրիարքին հրաժարականը: Այս ճշմարտութիւնը «Արմէնի» ի մէջ «գրպարութիւն» կը հռչակուէր: Թերթին խմբագրէն խնդրեցի «Նոր կեանք» ի միջոցաւ, իբր ուղղամտութեան ապացոյց, ստուգել իր թղթակցին հերքումին ճշգրտութեան աստիճանը ա՛յն անձնատուութիւններէն որոնք 1890ի Ազգային Վարչութեան կ'անդամակցէին եւ հիմա Բարիկ կը գտնուին: Այս օրինաւոր առաջարկիս իբր պատասխան, «Արմէնի» սեպտեմբերի թիւին մէջ, իմ հանրային գործունէութեանս մասին կարգ մը ծանօթագրութեանց հետ որոնց արժէքը չեմ հաճիր քննել, կ'ըսէ. «Սուլթանը երբեք Արթին փաշա Տասեանին պաշտօն չտուաւ Տ. Աշքեհանին ետ առնել առաջ պատրիարքութենէ տուած հրաժարականը:»

Եւ ահա «Մշակ» ի օգոստոս 14 26ի թիւին մէջ Կ. Պոլսոյ թղթակիցը երկարօրէն խօսելով այս խնդրին վրայ, ինքնաբերաբար առաջ կը բերէ ի հաստատութիւն իմ ըսածներուս «Արեւելք» ի 1890 օգոստոս 20ի թիւին հետ ա՛նկեալ սեղեկութիւնները զորոնք ես ալ կ'արտատպեմ, շնորհակալութիւնս յայտնելով Պ. Գիրուկի:

«Ուրբաթ օրը Արթ. Տ. Յովհաննէս աւագ քահանայ Մկրտան եւ քաղաքական ժողովոյ ատենապետ Սահակ Լիւնտի Ղազարոսեան Ս. պատրիարք հօր կողմէ՝ զիբ մը տարին արտաքին գործոց նախարարութեան խորհրդական Տասեան վսեմ. Յարութիւն փաշային, որով նորին սրբազնութիւնը կը յայտարարէ, թէ ետ կ'առնու իր հրաժարականն՝ յանուն վեհափառ սուլթանին Յարութիւն փաշայի կողմանէ իրենց հաղորդուած հաստատութեանց վրայ յիշուով, ա՛յն վստահութեամբ թէ եկեղեցական առանձնաշնորհմանց խնդրոյն վազ ընդ փոյթ լուծում պիտի տրուի ըստ կայսերական բացարձակ մտաց եւ ի նկատի պիտի առնուի եկեղեցական համագումար ժողովոյ նոր յիշատակագիրը եւ, նոյն խնդրոց վրայ եւ այս նպատակաւ յատուկ յանձնաժողով մը պիտի կազմուի, եւ յանուն Ն. Կ. վեհափառութեան հրամաններ պիտի ղրկուին հայաբնակ դաւառաց կուսակալներուն՝ պէտք եղած զգուշութիւններն ի գործ դնելու համար յօգուտ եւ ի բարեկարգութիւն ժողովրդեան եւ երկրին: Ս. պատրիարք հայրն այս զրով շնորհակալութիւն կը յայտնէ վեհափառ սուլթանին կողմէ Յարութիւն փաշայի միջոցաւ իրեն հաղորդուած այս հրամանաց եւ խոստմանց համար:

«Այս եղած էր աւաստի Ամեն. Ս. պատրիարք հօր

մի քանի օրէ հետէ Յարութիւն փաշայի հետ ունեցած երկար խորհրդակցութեանց արդիւնքն, զոր Ն. սրբազնութիւնն ուրբաթ օր ծանոյց խառն ժողովոյ անպաճեցուն, զորս ի Մաքրի դիւղ հրատարած էր: Խառն ժողովոյ անպաճեց կարծեաց ընդհանուր փոխանակութիւն մը ըրին խնդրոյն այս վախճանին վրայ եւ ցրուեցան, զործողութեան լիակատար ազատութիւնը թողլով Ն. ամենապատուութեան:»

Լէվրթ Հէրըա ալ 1890 սեպտեմբեր 5ին (Ն. Տ.) հետեւեալը կը հրատարակէր. «Վեհափառ սուլթանի հրամանները զործողութեան եւ Հայոց պատրիարքարանի գործերը զահագուցելու կարգադրութեան մը բերելու համար յանձնաժողով մը պիտի կազմուի, յորում հայերէն մի' միայն Տասեան Յարութիւն փաշան պիտի ղրկուին:»

\* \*

Հիմա պէտք է հարցնել. — Ինչո՞ւ այս անցեալը անպատճառ ջնջել կ'ուզուի:

Ա. Ա.

### ԼՈՒՐԵՐ

«Հայաստանի բարեկամ» անլլիսոցի ատիկանց ընկերութիւնը որուն գործունէութեան վրայ կը խօսինք «Նոր կեանք» ի ներկայ թիւին մէջ, իր հաստատութենէն՝ 1897 յունուարէն՝ մինչեւ 1898 յունիս 30, աւելի քան 11,000 ոսկի հասոյթ ունեցած է նուիրատուութիւններէ եւ հայկական ձեռագործներու վաճառումէ: Նուիրատուութեանց վերջին ցանկին մէջ կը գտնենք Նուպար փաշայի անունը՝ 100 անգ. ոսկի նուերով մը: Ընկերութիւնը Հայաստան ու Կիլիկիա ղրկած է 700 ոսկի ապրիլին, 679 ոսկի մայիսին եւ 865 ոսկի յունիսին: Յունիսի վերջը ընկերութեան ունեցած պատրաստ զրաճ էր 225 ոսկի:

\* \*

Լօզանէն թղթակից մը կը ղրէ մեզ. «Օգոստոս 22ին, Լօզան եկած էին երկու ասորի քահանայ որոնք իբր հայ քահանայ ներկայանալով քաղաքագետին՝ հրաման խնդրած էին Վանի մօտ զիւլի մը հայ սրբերուն համար զրամ հաւաքելու եւ սրբանոց մը հաստատելու: Եղելութիւնը իմանալով փութով զացի քահանաներուն պանդակը, եւ հարցուցի իրենց թէ որո՞ւ կը ղրկէին հաւաքուած ստակը. ըսին թէ Վան. Վանի հասցէն խնդրեցի, եւ ան ատեն ինձի ցոյց տուին թուղթ մը... որ ուրիշ բան չէր բայց եթէ Պոտաբէշի պանքայի մը ստացագիրը 900 ֆրանքի, զոր դարձեւորուն պիտի գանձեն: Խաբէութիւնը պարզեցի քաղաքագետին, որ բերել տալով քահանաները, փափաք յայտնեց սեսնելու իրենց պաշտօնը վաւերացնող թուղթը զոր կ'ըսէին թէ Էջմիածնի կաթողիկոսը շնորհած էր իրենց: Երկու

խաբերաները կմկմացին, ու յայտնեցին թէ թուղթը քսվերնին չէր բայց պիտի երթան բերնն: — Այսօր կը տեսնուիս քեզ հետ ինչպէս որ լօզանի քաղաքացիները հրամայած է այդ ջուրհատիկին որ առանց վայրկեան մը ուշանալու երկրէն դուրս ելլէ, եւ միանգամայն հրահանգ արուած է ստիկանութեան որ եթէ այդ մարդիկը նորէն տեսնեն Ձուրեցերիոյ մէջ, բռնեն եւ սահմանազրկեն դուրս հանեն:

«Փոփաբեցիլի էր որ ամէն Հայ, Եւրոպա կամ Ամերիկա, երբ առիթը ներկայանայ, ձեռքէն եկածը ընէ՝ թող չի սալու համար այս կարգի անարգ սրիկաններու շահագործել մեր ազէտքները:»

\* \*

Պանկորի (Անգլիա) մէջ վերջերս գումարուած միլիոնի մը առջեւ, Պ. Ք. Հէրրիս, որ ջարդերէն յետոյ Հայաստան ճամբորդեց կնոջը հետ եւ զիրք մը հրատարակեց տեսածներուն մասին, մեծապէս գրուածեց Հայկական նկարագիրը: Յայտնեց թէ Հայերը շատ հեռու են մուրալու տրամադիր ժողովուրդ մը ըլլալէ, եւ պատմեց թէ Արաբիկը քաղաքը՝ երբ կրցաւ ինքզինքը հոգալ՝ շուրջեց այլ եւս ո եւ է նպաստ ընդունիլ, հապա սկսաւ օգնել աւելի կարօտ վայրերու: Տիկին Հէրրիս, որ Մալթիայի մէջ որբանոց մը հաստատած է 20 որբով, իր հաւաքած սողոց մեծ մասին սրտաշարժ պատմութիւնը ըրաւ, վերջ մաղթելով մարտիրոս-ազգին ցաւերուն — «հիմակ աշխարհի միակ ազգը որ մարտիրոսութեան ենթարկուած է:» — Պանկոր անցեալ տարի 100 անգլ. ստիկ զրկած է Մալթիայի յիշեալ որբանոցին:

\* \*

Հայասեր տիկին Պէնզիլի սրահին մէջ գումարուած ժողովի մը առջեւ, Այնթապէն գարձող Տր<sup>\*\*\*</sup> խօսեցաւ ջարդերուն վրայ սրտնց հանդիսատես եղած էր, եւ Հայոց արգի կսկծալի կացութիւնը նկարագրեց: «Օտարականները, ըսաւ, յաճախ թիրաքին վրայ սա գաղափարը կը կազմեն որ ազէկ մարդ է, եւ այդպէս ալ է, բայց այնպիսի ազէկ մարդ մը որ չի վարանիր իր բարեկամը սպաննելու:»

\* \*

Թիւրք աննման վարչութեան գործելու կերպին մէկ շատ յատկանշանական օրինակը կը գտնենք անգլիական թերթի մը մէջ: Տեսարանը կ'անցնի Ատանա, որ Ամերիկացի մը գլխուց մը շինել կ'ուզէր վերջերս Հայ որբերու համար: Ամերիկացին շատ բարեկամ էր տեղական թիւրք պաշտօնեաներուն, որոնք առարկութիւն մը չունէին շէնքին կառուցմանը, բայց եթէ իրենք հաւանէին, բարձրագոյն իշխանութիւնները կրնային պաշտօնանի ընել զիրենք: Ուստի երբոր Ամերիկացին արտօնութիւն խնդրեց շէնքը կանգնելու, թուղթ մը արուեցաւ իրեն եւ ըսուեցաւ թէ կրնայ շինութեանը ձեռնարկել: Թուղթը թուրքերէն գրուած էր, ու Ամերիկացին չէր կրնար կարգաւ: Պաշտօնագիրը ծոցը գրաւ եւ շէնքը գրեթէ աւարտած էր

երբոր օր մը խելք ըրաւ թուղթը կարդացնել տալու: Սարսափած մնաց երբոր տեսաւ որ թուղթը իրեն արտօնութիւն կուտար ածխանոց մը շինելու եւ կ'ըսէր որ եթէ որոշեալ չափը անցնուէր՝ շինողները բոլոր պիտի բանտարկուէին եւ մեծ սուգանքի ենթարկուէին: Ամերիկացին թուղթը առաւ պաշտօնեային տարաւ ու ըսաւ. «Աս ի՞նչ ըրեր էք: Գուց ինձի այս թուղթը սուիք եւ ըսիք որ երթամ ու գործս տեսնեմ, ու ես ենթադրեցի որ ամէն բան կարգին էր եւ գեղեցիկ տուն մը շինեցի որ 40 աղայ պիտի պատուարէ:» Պաշտօնեան պատասխանեց. «Շինութեան արտօնագրին մէջ չափ որոշուած է: Չէ՛: Շէնքին մէջ ածուխ չի պիտի ունենաք:» «Այո՛» պատասխանեց Ամերիկացին: «Է՛հ ան ատեն ի՞նչ կայ դանդաղելու: Մենք ատշենքը ածխանոց կը կոչենք. գուց քիչ մը ածուխ պահեցէք հոն, եւ թող շէնքին մէջ պահուող 40 աղայն ալ ածուխին պահապանները ըլլան:»

\* \*

«ՎԱՂՈՒԱՆ ՉԱՅՆ». Ահաւասիկ այս նոր հանգստի տաղիւն թիւին բովանդակութիւնը.

Ծրագիր. — Մեծութիւն եւ Անկում (Լեւոն Արսէնեան). — Փրկիչներ, քրոնիկ (Սուրէն Պարթեւեան). — Հայրենիքի խօսքեր (Նահապետ). — Գաւառացի Հօլարտան (Կարօ). — Զաւակ, արձակ քերթուած (Զ. Յ.). — Ճամբու նոթեր, Էքս-լէ-Պէն (Լեւոն Արսէնեան). — Խփնսուէր (Վահան Տիրանեան) — Շարժուն կէտեր (Շայլօք). — Ժամագրութիւնը (Վահան Տիրանեան. — Անօղուտ զղջումներ (Արատազ):

Կը հրատարակուի Մանչէսթըր ամէն ամսու 15ին: Բաժնեկիւնն է ամէն տեղի համար տարեկան 5 շիլին կանխիկ: Նամակ ու բաժնեկիւն զրկել առ Souréne Bartevian 21 Brighton St., Oxford Rd., Manchester.

ՀԱՍՏԷՒ ՈՒ ԲԱԺՆԵԿԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆԻԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՆԱՄԱԿ ՈՒ ԲԱԺՆԵԿԻՆ զՐԿԵԼ ԱՌ

L. FRANK,  
309, LADBROKE GROVE,  
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆԻԻ կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15ին: Բաժնեկիւնն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 սոյար: